№ 51 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 8

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 8 № 51

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՋԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները» . . . . . . . 30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հիմնադիրները) . . . 25 կ.
3) «Պստիկ Մհեր» . . . . . . . . 25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում. 80 կ.
5) «Զգացմունք» . . . . . . . . 40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական). . . . 30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կողէնցիների օգտին։ Դիմել Կենտրոնական, Գուտտէնբէրգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կըստանան 30% զեղջ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով։ Հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (աո) 3—10

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնակարգ մի հարց. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Դէպքերը Վրաստանում. Հայ-Թուրքական համագումարը. Կոմս Վիտտէն և սահմանադիր ռամկավար կուսակցութիւնը. Ի նպաստ Թիւրքիայի ճնշված ժողովրդի. Ռումանահայերի դիմումը Ռուզվէլտին. Քաղաքային խորհրդի նիստը. Հոգևորականութիւնը ու պրօգրէսը. Անդրկասպեան երկրի կառավարչապետը Ասխաբադում. Մի տգեղ երևոյթ. Նպաստները պէտք է կենտրօնացնել. Նամակներ խմբագրութեան. Ի գիտութիւն հասարակութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փոքրիկ զանգակը։

## ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԻ ՀԱՐՑ

Մեր առաջ դրված է մի մեծ հերթական հարց։

Նա կենսական է, անյետաձգելի և վերին աստիճանի պարտաւորիչ մեր հասարակութեան համար։

Դա աղէտի ենթարկված մեր գիւղերի վերականգնման կարևոր հարցն է։

Հայ-Թուրքական արհաւիրքը մեզ ժառանգութիւն է թողել կարիքի մի ովկիանոս։

Ահա մի շարք գիւղեր, բոլորովին աւերված և հիմնայատակ եղած։

Նրանց պէտք է վերաշինել և քայքայված տնտեսութիւնը ոտքի կանգնեցնել։

Ահա գիւղերի մի ուրիշ շարք, որոնք չեն կարողացել աշնանը մշակել և սերմանել իրանց արտերը և իրանց յոյսերը դրել են գարնանացանի վրա։

Պէտք է դրանց օգնել, տալով նրանց սերմացու։

Ահա գիւղեր, որոնք ենթարկվել են մասնաւոր կողոպուտի և թալանի, կորցրել են իրանց լծկան տաւարը և կթան կովերին։

Պէտք է անյապաղ օգնութեան հասնել և ապահովել նրանց եզներով և կովերով։

Ահա գիւղեր, որոնք չեն կարող վերադառնալ իրանց նախկին տեղերը և կարօտ են աջակցութեան նոր տեղերում հաստատվելու համար։

Պէտք է նրանց համար դիւրութիւններ ստեղծել աջող կերպով լուծելու գործնական այդ հարցը։

Մենք կարող էինք թուել շատ կարիքներ, որ ունի աղէտի շրջանը։ Դա մենք չենք անում, որովհետև ամբողջ տարվայ անցքերը այնպիսի մանրամասնութիւններով արձանագրվում էին մամուլի էջերում, որ բաւական է միայն նրանց մասին յիշատակել և ահա ընթերցողի առաջ յարութիւն կառնեն բոլոր տպաւորութիւնները։

Կարիքը մեծ է և բազմատեսակ։

Պէտք է մեծ և բազմատեսակ լինի նոյնպէս օգնութիւնը։

Եւ որ շատ կարևորն է, այդ օգնութիւնը պէտք է լինի կարելիին չափ արագ և լուրջ կերպով։

Եթէ մենք, արդարև, կարող լինենք մեր գիւղականին դնել այնպիսի դրութեան մէջ, որ նա կարող լինի իր վարուցանքը կատարել, իր տնտեսութիւնը շարունակել, մենք տուած կը լինենք նրա ձեռքը ապրուստի և կարիքի ապահովութեան ինքնուրոյն զօրաւոր միջոց և այդպիսով նրանց դրած կը լինենք այն շաւղի վրա, որից նրան դուրս էին վռնդել դժոխային արհաւիրքները։

Սակայն չը պէտք է մոռանալ, որ րօպէները կրիտիկական են, որ մենք չենք կարող դանդաղել և որ ամեն մի կորցրած օր և է շաբաթ հարիւր հազարներ պէտք է խլէ երկրի տնտեսութիւնից և ժողովրդական շտեմարաններից։ Գարնան արեգակը հրամայողաբար պատուիրում է մշակել հողը և սերմանել նրան։ Այսօր տափարակներում, լեռնալանջերում, իսկ մի քանի ժամանակից յետոյ սարահարթերում կանցնեն այն յարմար օրերը, երբ կարելի էր հերկել հողը և սերմանել հացահատիկները և ուրիշ բոյսեր։

Իսկ եթէ այդ օրերը անցան և ժամանակին սերմը չը գցվեց հողի մէջ, այնուհետև մենք այլ ևս անկարող կը լինենք օգնել գիւղացուն իր սեփական աշխատանքով ոտքի կանգնելու և ուրեմն ստիպված կը լինենք բարեգործութեան միջոցով պահել գիւղական բազմութիւնը, այնպէս մենք մատնած կը լինենք նրան գրկանքների, տառապանքների և նրանց հետ կապված նորանոր դժբաղդութիւնների։

Մեր ժողովրդի դրութիւնը շատ լուրջ է, մեր բոլորի պատասխանատուութիւնը չափազանց մեծ։

Եւ եթէ անհրաժեշտ է գործել, մենք պէտք է գործենք անմիջապէս, ասպարէզ բերելով մեր նիւթական նպաստը, մեր անձնական աշխատանքը և եռանդը, մեր բոլոր հմտութիւնները և ժողովրդի օգնելու պատրաստակամութիւնը։

Մեր դանդաղութիւնը յանցանք կը լինի, մեր զանցառութիւնը մի ոճիր ժողովրդի վերաբերմամբ։

Րօպէները թանգ են։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զագամ, 6 մարտի

Թէև խաղաղութիւնը դեռ կատարեալ չէ, բայց արդէն սկսում են երևալ հայեր։ Կայարանի և հայ գիւղերի մէջ կամաց կամաց հաստատվում է երթևեկութիւն։ Դալլար կայարանից էլ կան դէպի գիւղեր գնացողներ և այնտեղից եկողներ։

—

Զարդախլու (Գանձակի գաւառ), 17 փետրվարի

Զարդախլվում կան խոշոր խաշնապահներ։ Սրանք ձմեռ ժամանակ իրանց անասունների համար դաշտային տեղերում՝ (Կուրի հովտում) Զագամի կամ Դալլարի մօտերքը՝ արօտներ են գնում և ոչխարը տանում այնտեղ։ Մի քանիսը ընկերանալով 1500—2300 ր. փող էին վճարում։

Այս տարի ևս նախկին տարիների նման՝ սեպտեմբերին Աննենֆելդի գերմանացիներից 2200 ր. արօտամարգեր առին։ Բայց երբ Գանձակի գաւառում խառնակութիւններ սկսվեցին, երկիւղ կրեցին տանելու։ Իսկ նոյեմբերին արդէն ընդհարումը լայն ծաւալ ստանալով, գնալը անհնարին դարձրեց, քանի որ նրանք պէտք է ապրէին Թուրքերի մէջը։ Նախկին չարիքների նման այս ամառ ևս խոտի հոգս չը քաշեցին, որի հետևանքը շատ ծանր եղաւ անասնապահների համար։ Բոլոր անասունները գիւղում մնացին, որով խոտը շատ թանգացաւ—մեզ համար չը տեսնված բոլորովին—սայլը 25—30 ր., այն էլ մեծ դժուարութեամբ է ճարվում։

Դրա հետևանքն այն եղաւ, որ չը նայելով ահագին ծախսերին, բայց և այնպէս սովից մեծ քանակութեամբ ոչխարներ կոտորվեցին։ Մինչև օրս 27 խաշնապահներից կոտորվել են 6782 ոչխար։ Կան մարդիկ, որոնց 500-ից աւելի են կորցրել, իսկ քիչ վնասվողը 100-ից պակաս չէ։ Մի գիւղի համար, որ առանց այն էլ հարուստ չէ, սա մի զգալի կորուստ է։

Ն. ք. Մ.

—

Գարնան հետ աւազակային խմբերն ևս սկսում են երևան գալ։ Յարձակումները կը դադարի, գողութիւնները կը սկսվի։ Աննենֆելդ աւանի մօտիկ՝ Մուսուլ գիւղում, 8 հոգի աւազակներ մի Թուրքի տանը պահված ժամանակ, փետրվարի 15-ին, տեղիս դրագունները իմանալով այդ մասին, յանկարծ տանը շրջապատում են (գիշերով) և երկուսին սպանելով, մնացածը կարողանում են փախչելով ազատվել։ Դրագունների ձեռքին մնում են 8 ձի և մի խուրջին փամփուշտ։ Նրանք մտադիր են եղել մերձակայ հայ գիւղերի անասունների վրա յարձակվել և քշել։ Ահա թէ որտեղից է ընդհարումը առաջ գալիս։

Այս օրերս մեզ մօտ եկաւ մի բաղդացի՝ Յարութիւն Խաչատրեան, որ իր կին Շամամի հետ գերի էր Խինալուում Ալիօղլի Ալի-Մամմադի տանը։ Նրա ասելով դեռ ևս մի քանի գերիներ կան Խինալուում և Զուլգադարօֆների մօտ. Ադիլբէկ Զուլգադարօվի տանը մի աղջիկ 5 տարեկան։

Մէհրալի-բէկ Զուլգադարօվի տանը նոյնպէս մի աղջիկ 7 տարեկան։

Ալախլումը (Խինալի) Մաշադի Բայրամի տանը մի աղջիկ 15—16 տարեկան։ Նրան Թուրքերը իրանց ամուսին են վերցրել։

Մենք այս մասին դիմեցինք ուր հարկն էր նրանց ազատելու համար։

Մեր վիճակում խիստ ստիպողական զէնքերը ժողովում են։

Նոյն

—

Մարտի 5-ին Գանձակում Թուրքերը վերադարձրին մի գերի հայուհու իր չորս երեխաներով, իսկ 6-ին հայերը, ինչպէս հաղորդում է «Յառաջը», փոխադարձաբար առաջարկեցին ոստիկանութեանը վերադարձնել Թուրքերին Ումուդլիում գերված 4 Թրքուհիներին։ Պրիստաւի ներկայութեամբ Թրքուհիները չուզեցին վերադառնալ Թուրքերի մօտ։ Այդ մերժումը վերագրելով հայերի ճնշման, նահանգապետի տան առաջ խռնված հազարաւոր ամբոխը գրգռված պահանջում էր հարց ու փորձի ենթարկել նրանց Թուրքական մասում։ Գերուհիներին տարան Կորիւն վարդապետի մօտ 100 կօզակի ուղեկցութեամբ պաշտօնական հարց ու փորձի համար։ Իշխանութեան, վարդապետի և Թուրք ներկայացուցիչների ներկայութեամբ Թրքուհիները նորից կտրուկ կերպով յայտարարեցին իրանց ցանկութիւնը մնալ հայերի մօտ։ Գերուհիներին վերադարձրին։ Թուրքերի մէջ մեծ յուզումն է տիրում։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գետաշէն, մարտի 2-ին։ Գարունը բնութեան հրաշալիքներով կամաց-կամաց մերձենում է մեր շէմքին. արդէն երևում են նրա անդրանիկ նշանները, թէև 2-3 օր առաջ փչեց բուք-բորանը, սկսեց մեծ-մեծ քուլաներով ձիւն տեղալ, օր ու գիշեր անդադար թափելուց յետոյ՝ ծածկեց սար ու ձոր ձիւնի հաստ շերտով։ Այս էլ պակաս հարուած չէր մեր գիւղացու առանց այն էլ քայքայված տնտեսութեանը։ Հացը թանգ, անասունների կերը պակաս, գիւղացիք էլ հնարաւորութիւն չունեն որ և է տեղից օրվայ պարէնը հայթայթելու. առաջիկայ ամառն էլ գրեթէ հողից սպասելիք չունին, որովհետև ամբողջ 5-6 հարիւր ծխանի գիւղին միակ հաց մատակարարող Գեօրանը, յայտնի պատճառով, դեռ անցած աշունքից, թողնված է նապաստակների խնամքին։ Բայց մի րօպէ մոռանանք մեր այս դառնութիւնները, քաղցածութիւնից չենք մեռնի, միայն ուրախ լինենք, բայց ոչ յուսանք, որ վերջին ժամանակներս Թուրք-հայկական արիւնահեղութիւնները մեր կողմերում դադարել են, թէև այս խորին ու խորհրդաւոր լռութեան մէջ գիւղացիք դեռ չեն կարողանում աներկիւղ դաշտ կամ այգի դուրս գալ։ Մեր Չինգիխաննականները մի շարք ակտիվ միջոցներով հասկացան, խելքի եկան, որ վնասից զատ օգուտ չեն տեսնում։ Նրանք սկզբներում մի քանի խմբական անաջող յարձակումներ անելուց յետոյ վերջապէս քշեցին, տարան արօտավայրից Ալբան գիւղի նախիրը, բայց աւա՜ղ, աւարը չըմարսվեց. երեք օրից յետոյ տուժող գիւղացիք մի «դժոխային դասով» ուսուցնել տուին թշնամուն իր «բրթածը»։ Համանման դէպքերը ստիպել են Թուրքերին այժմ «պոչները իրանց քաշած» հանգիստ նստել ու մտածել։

Անցեալ օրը գիւղս էր եկել գաւառապետ պ. Ավալեանը, որը նախ երկար ու բարակ խրատներ, պատուիրաններ կարդաց գիւղացիների գլխին, յետոյ հրամայեց պետական տուրքերը շուտափոյթ հաւաքել և գանձարանը տալ։ Գիւղացիք իրանց կրած վնասների մասին խօսեցին, բայց նա խորհուրդ տուեց այդ մասին ուր հարկ է գանգատ չըտալու, ասելով, որ ամեն գանգատ անօգուտ կը լինի։ Եւ՝ երևի գիւղացիներին մխիթարելու համար՝ աւելացրեց թէ, շնորհիւ իմ գիւղացիների անտակտութեան, Վրաստանում ես մեծ վնասներ եմ կրել, ումից կարող եմ վնաս պահանջել։

Գիւղս եկաւ գործակալ Անանիա քահանայ Շիրակունի, եկեղեցում մի ընդարձակ քարոզ խօսեց ժողովրդին, բացատրեց ուսումնարանի նշանակութիւնը, պատուիրեց հոգ տանել ծխական դպրոցի բացման համար։ Դժբաղդաբար վերջինիս համար մինչև օրս չէ եղել ոչ մի հոգացողութիւն. չգիտենք ինչ են մտածում մեր հոգաբարձուները։ Դպրոցի սեփական շինութեան կիսատ-պռատները աւարտելու համար հարկաւոր է մի խոշոր գումար։ Եթէ ցանկանում ենք, որ առաջիկայ սեպտեմբերին բացվի մեր ծխական դպրոցը, ուրեմն նախ պիտի աշխատենք շինութիւնը աւարտել։

Մին. Բաղդասարեան

## ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ծիաթուրա (փետրվարի 23-ից մինչև մարտի 1-ը)։ Վերջ չի տրվում Վրաստանում կատարվող անկարգութիւններին և աւերումներին։ Ինչպէս նախընթաց նամակումս էլ գրել էի, Տիրբվալ գիւղում այրեցին 2 ընտանիք, որոնք, իշխանութեան կարծիքով, պրօպագանդիստներ էին։ Մի տան մէջ մնացել է օրօրոցի մէջ պառկած մի երեխայ, որի խեղճ մայրը կրակը մեծանալուց յետոյ է մտաբերել նրան. մայրը սկսել է ծվալ, բարձր ձայնով լաց լինել և ուզեցել է կրակի մէջ ընկնել, բայց այդ ցաւալի պատկերը տեսել է մի մարդ, որը խափշին ծածկած մտել է կրակի մէջ և երեխային օրօրոցով դուրս է բերել. բայց խեղճ երեխայի մարմնի ներքևի մասը այրվել է, և առողջանալու յոյս չը կայ։

Փետրվարի 24-ին Ծիաթուրայում եղած զօրքի գլխաւորը կանչեց Պերեվիս գիւղի գիւղապետին և հրամայեց, որ Շուքրութ և Պերեվիս գիւղերում հրացաններ են եղել թաքնըված, հէնց հիմա թող գիւղապետը կարգադրէ, որպէսզի բոլոր հրացանները իշխանութեանը յանձնեն, հակառակ դէպքում, - ասաց գլխաւորը, կը գնանք և այդ 2 գիւղերը կաւերենք (այս գիւղերը մի անգամ արդէն աւերել են)։ Գիւղապետը շատ էր համոզում գնդապետին, որ այդ գիւղերում զէնք չը կայ, բայց գնդապետը վճռական կերպով պահանջեց զէնքը և մի օր էլ ժամանակ տուեց։ Երբ յիշեալ գիւղերն իմացան այդ լուրը, իրարանցման մէջ ընկան։ Բոլորը զգում էին, որ աւերումը և թալանը անխուսափելի են, հաւաքվեցին, խօսեցին, զէնք էլ շատ փնտրեցին, բայց ինչպէս կը գտնէին, երբ չը կար։ Կրկին անգամ բնակիչները ստիպված եղան տները դատարկել և օրիորդներին և երեխաներին հեռացնել այն ժամանակ, երբ ½ արշին ձիւն կար և 18 աստիճան ցուրտ։ Ներկայումս յիշեալ գիւղերը նոյն այդ անտանելի վիճակի մէջ են. դեռ բնակիչները իրանց տները չեն կարողանում տեղափոխվել, ոչ էլ գիտեն թէ մինչև երբ կը շարունակվեն այդ անկարգութիւնները։

Փետրվարի 20-ին Ծիաթուրայում այրել են 5 խանութ և խանութների մօտ եղած տները. վնասը հասնում է 10,000 րուբլու։

Փետրվարի 28-ին խուզարկեցին Թատրօնը և էժանագին ճաշարանը։ Թատրօնում գտան ինչ որ մի կասկածաւոր թուղթ, իսկ ճաշարանում առ այժմ ոչինչ չը գտան, յետոյ բարձրացան կտուրը և շատ փնտրելուց յետոյ, վինտօվկայի 2 փամփուշտ են գտել։ Ասում են, որ թատրօնը և ճաշարանը պէտք է այրեն, որովհետև յեղափոխականները այնտեղ են հաւաքվելիս եղել. տեսնենք ինչ կը լինի։

Այս տողերը գրելիս գիւղը եկան 2 վագօն զօրք։ Ասում են՝ էլի կաւերլանան։ (Յ. Փ.)

## ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Վերջին, մարտի 6-ի նիստը

Երկուշաբթի, մարտի 6-ին, ցերեկվայ ժամը 2½-ին պալատի սպիտակ դահլիճում կայացաւ հայ-թուրքական վերջին, այն է փակման նիստը, նախագահութեամբ Փոխարքայ կոմս Վօրոնցօվ-Դաշկօվի։

Այս անգամ ևս դահլիճի վերնատունը լցված էր տիկիններով։

Բանալով նիստը Փոխարքան արտասանեց հետևեալ ճառը.

Փոխարքայ կոմս Վ. Դաշկօվի ճառը.

«Ձեր նիստում դուք շօշափեցիք մի շարք հարցեր, որոնցից շատերը չէ լուծում ներկայ րօպէի անյետաձգելի պահանջները։ Երբ տունը այրվում է, ժամանակ չէ մտածելու այն մասին, թէ ինչ նիւթից և ինչ պլանով պէտք է շինել նոր անհրկիզելի տունը։ Պէտք է որոշել որտեղ է հրդեհի ֆօկուսը և նրա վրա ուղղել շիջեցնելու բոլոր միջոցները։ Բայց դուք չորոշեցիք այդ ֆօկուսը, թէև մեզանից ամեն մէկին բոլորովին յայտնի են այն պատճառները, որոնք ներկայ րօպէին վառ են պահում հրդեհը։ Անկարգութիւնները պահանջում են մի կողմից անլեգալ զինւորված կազմակերպութիւնները, իսկ միւս կողմից—աւազակների հրոսակները, որ յաճախ ղեկավարված են լինում ծածկարար ազդեցիկ անձանց ձեռքով։ Այդպիսի արտայայտութիւններ կառավարութիւնը չէ կարող ըմբռնել և կարգը խանգարողներին հալածելու համար արդէն ձեռք են առնվել և ձեռք կառնվեն ամենավճռական միջոցներ։ Թագաւոր Կայսրին հաճոյ է, որ հայ-մուսուլմանական թշնամութիւնը դադարեցնվի և նա պէտք է դադարէ։

Ձեզ եմ դիմում, պարոններ, որ դուք ևս գործ դնէք ձեր ազդեցութիւնը դադարեցնելու համար յարձակումները և թալանները և հաղորդեցէք ժողովրդին թէ Թագաւորի կամքը և թէ այն խիստ միջոցների մասին, որոնք պէտք է շարունակվեն մինչև չարիքի արմատախիլ լինելը։

Այն գործնական միջոցների թւից, որոնց վերաբերմամբ դուք համաձայնութեան էք եկել, ես մի քանիսը ընդունելի եմ համարում և դրանք ձեզ կը յայտնվեն։ Այժմ ես կը կամենայի կանգ առնել մի կէտի վրա։ Ընդհանուր բովանդակութեան հարցի քննութեան ժամանակ, ժողովի անդամներից մինը, Ա. Ի. Խատիսօվը, յիշեց իմ կարծիքը այդ առարկայի մասին։ Ես կարծում եմ, որ գրչի հարուածով չէ կարելի ստիպել ժողովրդին յանձնել զէնքը, որ նա կրել է հազարաւոր տարիների ընթացքում։ Զէնքը շատերը պահում են ինքնապաշտպանութեան համար, իսկ զէնք կրելը առաջ է եկել անհրաժեշտութիւնից։ Բայց ես կը համաձայնէի ընդհանուր զինաթափութեան օգտի հետ, եթէ ես հաւատացած լինէի թէ իրողապէս հնարաւոր է ի կատար ածել այդ միջոցը։ Սակայն ես համոզված եմ, որ միայն խաղաղ մարդիկ կը յանձնեն զէնքը, իսկ նրանք, որոնք պահում են զէնքը յանցաւոր նպատակների համար, կը թաքցնեն։ Այդ պատճառով ես չեմ ընդունում ընդհանուր զինաթափութեան հարցը, բայց ես պնդում եմ զէնքը բոլոր զինւորված կազմակերպութիւնների, հասարակութիւնների և զէնքը ի չարը գործ դնող մասնաւոր անձանց ձեռքից խլելու անհրաժեշտութեան վրա։ Կարծում եմ, որ կը հասնէ այն օրը, երբ կովկասեան ազգերը ևս կը հանեն իրանց վրայից զէնքը, իբրև աւելորդ բեռն։ Այդ ժամանակ կը հասնի այն օրը, երբ իսկական քաղաքակրթութիւնը, հիմնված սիրոյ վրա առ մերձաւորն և յարգանքի վրա առ օրէնքը, կը թափանցէ Կովկասի բոլոր տեղերը և կը դառնայ ամենքի, մեծի և փոքրի ժառանգութիւն։

Աւարտելով խօսքս դարձեալ նրանով, որ ես կարող էի ակնկալել ձեր խորհրդակցութիւնից աւելի ռէալական միջոցների մշակումը, ես այնու ամենայնիւ հանում եմ նրանից այն եզրակացութիւնը, թէ դուք ամենքդ ձգտում էք խաղաղ համաձայնութեան։ Ուրեմն ներշնչեցէք այդ ձգտումը ձեր ցեղակիցներին և խաղաղութիւնը կիրագործվի»։

Արտասանելով այս ճառը, Փոխարքան կամեցաւ հեռանալ, բայց Եղիշէ վարդապետ Մուրադեան, խօսք խնդրելով, ասաց.

«Ձերդ Պայծառափայլութիւն, այսօր էլ, մեր համաժողովի փակման ժամին, ես չեմ կարող չը կրկնել մեր խորին շնորհակալութեան զգացմունքները Ձերդ Պայծառափայլութեան ցոյց տուած վստահութեան և սիրոյ համար։

Կովկասի ազգերը ցայսօր միայն գիտէին յորդորներ, հրամաններ և պատիժներ, որ յաճախ իրանք էլ էին իրար տալիս։ Նրանք ծանօթ չէին այն ուժեղ գործօնի, եռանդի և ոգևորութեան այն աղբիւրի հետ, որը սէր է կոչվում և որը ստեղծագործում է։ Այսուհետև, խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ, մենք յոյս ունենք, որ Կովկասի բնակիչները կը լսեն հայրական սիրոյ ձայնը, որ այնքան յատուկ է ձեզ և մեզ ցայսօր անծանօթ էր, և նրանով ոգևորված ու նոր եռանդ ստացած կը սկսեն միացած ույժերով աշխատանքը յօգուտ գեղեցիկ Կովկասին»։

Փոխարքան պատասխանեց.

«Ես համաձայնեցի գալ Կովկաս և լինել Փոխարքայ, ղեկավարվելով միայն սիրով առ Կովկասը և առ բոլոր նրա ժողովուրդները և ի կատարումն Թագաւոր Կայսրի նախացուցմունքների, ես ոչ մի խտրութիւն չեմ դնում երկրի ազգութիւնների մէջ և դուք ամենքդ, պարոններ, ինչպէս և այս խորհրդակցութեան չը մասնակցող ազգութիւնները, հաւասարապէս վայելում էք իմ սէրը։ Միակ բանը, որ ես ձեզանից խնդրում եմ—դա վստահութիւնն է դէպ ինձ»։

Այս խօսքերից յետոյ Փոխարքան հեռացաւ և նախագահական աթոռի վրա նորից նստեց գեներալ Մալաման և առաջարկեց պ. Պետերսօնին կարդալ Փոխարքայի որոշումները։

### ՈՐՈՇՈՒՄՆ

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի։

Պատգամաւորների իղձերի շարքից առանձնացնելով աւելի գործնական միջոցները, իբրև համապատասխանող ներկայ սուր ժամանակին, Փոխարքան հնարաւոր է գտնում.

1) Հաստատել եզրակացութիւնները այն մասնաժողովի, որ ընտրված էր կանոնաւորելու քօչը այս տարի և ապահովելու ազգաբնակութեան համար ցանքային աշխատութիւններով զբաղվելու հնարաւորութիւնը. 2) Հաստատել Փոխարքայի վարչութեան կից հայերի և Թուրքերի խաղաղացման համար առանձին խորհրդակցութիւն երկու ազգերի ընտրեալներից. 3) Կազմել նահանգապետներին և գաւառապետներին կից նոյն հիմունքով խաղաղարար մասնաժողովներ այն նպատակով, որ տեղական իշխանութիւնները կարողանան դիմել նրանց կարևոր դէպքում խորհրդով հայ-Թուրքական յարաբերութիւնների բոլոր խնդիրների համար. գաւառական մասնաժողովները պէտք է, գաւառի գիւղերը շրջելիս, ամեն կերպ աջակցեն ամենքի համար այնքան ցանկալի խաղաղութեան ամրացման։

Անկախ դրանից, Փոխարքան անմիջական կարգադրութիւն կանէ, որ վարչութիւնը ամենավճռական միջոցներ ձեռք առնէ թէ անկարգութիւնների առաջն առնելու և թէ նրանց զսպելու համար, խստիւ պատժելով յանցաւորներին, ինչպէս և ապահովացնելու ժողովրդի համար հաղորդակցութեան ճանապարհները և խաղաղ աշխատութիւնները, վերադարձնելով բնակիչներին աւերված գիւղերը, եթէ նրանք այդ ցանկանում են։ Այն անձինք, որոնք զէնք ունեն յանցաւոր նպատակների համար, կը զինաթափվեն։ Այն գիւղերը, որոնց բնակիչները յանցաւոր կը գտնվեն խառնակութեան մէջ, կենթարկվեն վարչական պատժի։ Անցեալ աւերումներից գոյացած վնասները պէտք է որոշվեն մի առանձին մասնաժողովի ձեռքով ժողովրդի ընտրեալների մասնակցութեամբ և հատուցանվեն այն կարգով, որը կառավարութիւնը կը գործադրէ Ռուսաստանի կենտրոնական նահանգներում եղած նոյնպիսի աւերման դէպքերի վերաբերմամբ։ Թեթևութիւններ կը տրվեն հարկերի հաւաքման մասին աւերումների ենթակայ եղած տեղերի ազգաբնակութեան համար օրէնքի սահմանած կարգով։ Շինական հասարակութիւնների ռայոնների դասաւորութիւնը, հողեր յատկացնելը ապահով տեղերում, հողաբաժիններ կամաւոր փոխանակութեամբ կը կատարվեն, ժողովրդի միջնորդութեան համաձայն, հնարաւորութեան չափով։ Ինչ վերաբերում է նահանգական և գաւառական վարչութեան և ոստիկանութեան վերակազման, Փոխարքան ինքն իր հոգացողութեան առարկայ է շինել այդ հարցը և նրան վճռելիս ուշադրութեան կառնվեն խորհրդակցութեան իղձերը, իսկ վարչութեան և ոստիկանութեան լաւագոյն կազմը ապահովացնելու համար արդէն միջոցներ են ձեռք առնվում և ձեռք կառնվեն անշեղ կերպով։ Նոյնպէս հարց կը յարուցանվի և ազգաբնակութեան համար ապահովացնելու արագ արդարադատութիւնը, խորհրդակցութեան ցոյց տուած հիմունքներով։

Խորհրդակցութեան ընդգծած հարցերը լուսաւորական միջոցների մասին, ինչպէս և մուսուլմաններին իրաւունքների կողմից ուրիշ ազգութիւնների հետ հաւասարացնելու մասին, արդէն մշակվում են կենտրոնական կառավարութեան կողմից և, պէտք է կարծել, կը լուծվեն խորհրդակցութեան ցանկացած մտքով։ Իսկ Փոխարքան ձեռք կառնէ իրանից կախված միջոցները գրագիտութիւնը տարածելու ժողովրդի մէջ և դպրոցական գործը հարկաւոր բարձրութեան վրա դնելու։ Դրա հետ միասին անմիջապէս կը ձեռնարկվի գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնների և վարչական կարգադրութիւնների լուսաբանութեան, որոնք ճնշում են մուսուլմաններին, որպէս զի այն բոլորը, ինչ որ այդ կողմից կախված է Փոխարքայի իշխանութիւնից, կարելի լինի հարթել անմիջապէս, իսկ նրա իշխանութեամբ ոչ լուծվելի հարցերը կարելի լինի արծարծել սահմանված կարգով։ Առաջին տեղը պէտք է դրվի ուսուցչական սեմինարիայի բացումը մուսուլմանների համար աւելի յարմար տեղում, քան Գօրի քաղաքն է։ Վերջապէս, անյապաղ պէտք է կազմվի Փոխարքայի վարչութեան կից խորհրդակցութիւն քննելու համար ընդհանուր հարցը թէ ինչ միջոցներ են պէտք աջակցելու, որ քօչողները անցնեն նստակեաց կեանքին։

Փոխարքայի այս որոշումները կարդալուց յետոյ նախագահ Մալամա յայտնեց, որ համագումարը աւարտեց իր պարապմունքները և այժմ նա խորապէս համոզում է պատգամաւորներին, վերադառնալով իրանց տեղերը, տարածել խաղաղութեան գաղափարները։ Ապա շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներին իրանց կրած նեղութեան համար և յայտնելով, որ Փոխարքային կից կայանալիք խորհրդակցութիւնը կարող է հէնց այժմ սկսել իր պարապմունքները, եթէ ընտրվեն ժողովրդի ներկայացուցիչները, յայտարարեց համագումարը փակված։

Հաջիև Իսրաֆիլ-բէկ ոտքի կանգնելով՝ առաջարկում է հաշտութեան կնքումը մի բարի գործով յաւերժացնելու համար հիմնել Թիֆլիսում համալսարան կամ բարձր մասնագիտական դպրոց և յատկացնել նրան Վօրօնցօվ-Դաշկօվի անունը, ի փոխարէն այն հայրական և վեհ հոգածութեան, որ Փոխարքան ցոյց տուեց երկու ազգութիւնները հաշտեցնելու և խաղաղացնելու գործում։ Նա, Հաջիևը, յայտնում է, որ մուսուլմանները ամենայն ուրախութեամբ արձագանք կը տան այս կոչին և համոզված է, որ նոյնը կանեն և հայերը՝ և երկու ազգերն էլ կը շտապեն հանգանակութիւն բանալ ֆօնդի համար։

Հայերը պատասխանում են երկար և բուռն

ծափահարութիւններով: Ծափահարում են նաև Թուրքերը և վերնատան ունկնդիրները:

Գեներալ Մալամա գնալով Փոխարքայի մօտ և վերադառնալով, յայտնում է, որ կոմս Վօրոնցով-Դաշկովը շնորհակալութիւն է յայտնում և համաձայնութեամբ ու համակրութեամբ ընդունելով Թիֆլիսում բարձր ուսումնարան հիմնելու առաջարկը, թոյլատրում է բանալ հանգանակութիւն (երկարատև և բուռն ծափահարութիւններ):

Հայ-Թուրքական համագումարը, վերջացնելով իր աշխատութիւնները, փակվեց:

—

Նոյն օրը մարտի 6-ին, ցերեկվայ ժամը 4-ին, հայ և Թուրք պատգամաւորներից մի քանիսը, թւով մօտ 20 հոգի, հրաւիրվեցին Թիֆլիսի նահանգապետ բարօն Ռաուշ-ֆօն Տրաուբենբէրգի և նրա ամուսին բարօնեսս տանը՝ թեյի նախաճաշի և բարեկամական խօսակցութեան: Հայերից հրաւիրված էին—Եզնիկ վարդապետ, պ. պ. Ա. Քալանթար, Կ. Խատիսեան, Ալ. Խատիսեան, Հ. Առաքելեան, Ս. Յարութիւնեան, բժ. Ստեփանեան, Ա. Բաբեան և Ս. Թաղիանոսեան: Այդտեղ ընտանեկան սեղանի շուրջը բոլորված՝ արտասանվեցին մի քանի ճառեր թէ իր բարօնի, և թէ հայ և Թուրք հիւրերի կողմից:

—

Նոյն օրը, երեկոյեան ժամը 8-ին դարձեալ Փոխարքայի պալատում կայացաւ հայ և Թուրք պատգամաւորների մասնաւոր խորհրդակցութիւնը: Այդտեղ որոշվեց մի ընդհանուր կոչով, ստորագրված բոլոր պատգամաւորներից, դիմել մուսուլման և հայ ժողովուրդներին, յայտնելով Փոխարքայի ասած խօսքերը և հրաւիրելով վերջ դնել միանգամայն բոլոր թշնամութիւններին և վերադառնալ խաղաղ, կուլտուրական գործունէութեան:

Ապա նպատակայարմար նկատվեց այժմ իսկ ընտրել ժամանակաւորապէս կազմը այն խորհրդակցութեան, որ պէտք է լինի Փոխարքայի վարչութեան կից հայ-Թուրքական յարաբերութիւնների խնդիրների վերաբերմամբ, այն պայմանով միայն, որ այդ ժամանակաւոր կազմը աշխատէ և պնդէ, որ խորհրդակցութեան անդամների ընտրութիւնը երկու ազգութիւնների կողմից անյապաղ կատարվի: Խորհրդակցութիւնը կատարեց այդ կազմի ընտրութիւնը. հայերը ընտրեցին 8 հոգի, որոնցից 3-ը կանդիդատ. նոյն թւով անձինք ընտրեցին և Թուրքերը:

Հայերի կողմից ընտրվեցին—պ.պ. Ալ. Քալանթար, բժ. Կ. Ստեփանեան, Ս. Յարութիւնեան, բժ. Ալ. Խատիսեան և Լ. Ղուլեան, իսկ կանդիդատներ—պ. պ. Հ. Առաքելեան, Լևոն Սարգսեան և Ա. Սարուխանեան:

Թուրքերի կողմից ընտրվեցին—պ.պ. Թօփչիբաշեվ, Կազանալիպով, Զիւլղադարով, Վէքիլով, Շախմալիեվ և կանդիդատներ—Էմինով, Զիատխանով և Շահթախտինսկի:

## ԳՐԱՖ ՎԻՏՏԷՆ ԵՒ ՍԱՀՄԱՆ.-ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մայրահեղ յեղափոխական կուսակցութիւններին լեգալ գործունէութեան ասպարէզից վանելուց ու նրանց կրկին ստորերկրեայ աշխատանքի մէջ գցելուց յետոյ, Վիտտէ-Դուրնովօյի կառավարութիւնը սկսեց հալածանքի ենթարկել սահմանադիր - ռամկավարների կուսակցութիւնը: Այդ բանը, ի հարկէ, ընդհանուր զայրոյթ առաջացրեց ու շատերը հաւատացած էին, թէ այդ հալածանքի կարգադրութիւնը անպատճառ Դուրնովօի գործն է և հազիւ թէ Վիտտէն դրա մէջ մաս ու բաժին ունենայ: Սակայն ինչպէս մայրաքաղաքի թերթերն են հաղորդում, վերջը պարզվեց, որ այդ բոլոր միջոցների բուն հեղինակը հէնց ինքը Վիտտէն է:

Դուրնովօն, ինչպէս ինքն է յայտարարել, մասնաւորապէս կուսակցութիւններ հալածող չէ, որովհետև ինքը չէ կարող ենթադրել, որ Ռուսաստանում էլ եւրոպական երկրների նման կարող են քաղաքական կուսակցութիւններ գոյութիւն ունենալ: Նա միանգամայն արհամարհում է կուսակցութիւնները և այդ պատճառով էլ նրանց ծրագիրները իսկի չի էլ կարդում, որպէս զի հասկանայ թէ նրանք ինչ քաղաքական հայեացքներ ունեն:

Մինչդեռ բոլորովին նոյնը չէ Վիտտէն. Նա շատ լաւ է ճանաչում կուսակցութիւնները, և նա կարգադրել է սահման.-ռամկավարական կուսակցութեան ժողովները խափանել հէնց նրա համար, որ նա ճանաչում է այդ կուսակցութիւնը ու շատ գիտակցաբար է վերաբերվում իր գործին: Պրեմիէրին դուր չէ գալիս այդ կուսակցութիւնը նախ նրա համար, որ դա չափազանց շատ է իր մասին բէկլամներ անում, և ապա նրա համար, որ դա իր չափը չէ ճանաչում, այսինքն, ուզում է գրաֆը ասել, որ ինքը դժուարանում է որոշել, թէ որտեղ են վերջանում յեղափոխականները և որտեղ սկսւում սահ.-ռամկավարականները: Գրաֆը չէ կարողանում ըմբռնել, որ յեղափոխութիւնը վերջանում է միայն այն ժամանակ, երբ ամեն տեսակ քաղաքական հայեացքների տէր մարդկանց թոյլ է տրվում հրաժարվել իրանց ստորերկրեայ, կոնսպիրատիւ գործունէութիւնից և հրապարակ դուրս գալ ազատ համարձակ քաղաքական կեանք սկսելու: Իսկ քաղաքական կեանքը պայմանաւորվում է քաղաքական մեծ կուսակցութիւններ կազմելով, որի համար, բնական է, պիտի թոյլատրվեն և «բէկլամները»: Այդ բէկլամների նշանակութիւնը, ինչպէս իրաւացի կերպով նկատում են մայրաքաղաքի թերթերը, շատ լաւ է ըմբռնել հէնց ինքը գրաֆ Վիտտէն, որը նահանգապետների, խաղրաքիկների ու այլ իր ստորադրեալ պաշտօնեաների միջոցով մեծադղորդ բէկլամներ է անում այն բոլոր կուսակցութիւնների համար, որոնք կառավարութեան հովանաւորութեան տակ են գտնվում: Կառավարութիւնը դրանց կոչերից հարիւր հազարաւոր օրինակներ է տպում ու ոստիկանութեան միջոցով ցրվում ժողովրդի մէջ, նոյն ոստիկանութեան միջոցով ժողովներ են սարքվում, կօմիտէտներ են կազմվում և այլն և այլն: Մի խօսքով այդ բէկլամները կառավարութեան կողմից մի կատարեալ սիստեմի են վերածված: Այդ դեռ բաւական չէ. վերջերս զեմսկի նաչալնիկներին ուղարկված ցիրկուլիարից, որ տպագրվեց «Рѣчь» թերթի № 1-ում, յայտնվում է, որ ընտրողական ժողովներից պիտի հեռացնել կասկածելի ու անհանգիստ տարրերին, որպէս զի ընտրութիւնների կանոնաւոր ընթացքը չը խանգարվի: «Մինչև իսկ ցիրկուլիարում խորհուրդ է տրվում, որ այդ կարգի անձանց անունները տպագրված կախված լինեն ժողովարաններում: Եւ այդ բոլոր զգուշութիւնները ձեռք են առնվում նրա համար, որ ընտրութիւնների ժամանակ,—ասված է ցիրկուլիարում,—հակակառավարչական կուսակցութիւնները, ինչպէս օրինակ՝ սօցիալ-դէմօկրատները, սօցիալիստ-յեղափոխականները, սահմանադրական-ռամկավարական ու դրանց նմանները չը կարողանան ճնշում կամ բռնութիւն բանեցնել»:

Ինչպէս տեսնում էք, սահման.-ռամկավարական կուսակցութիւնն էլ Վիտտէի աչքում նոյնքան վտանգաւոր է, ինչպէս և սօցիալ-յեղափոխական կուսակցութիւնը, ուստի և ամեն կերպ աշխատելու է նրա ազդեցութիւնից էլ զերծ պահել ընտրութիւնները: Բայց դրանով էլ չէ բաւականանում գրաֆ Վիտտէի կառավարութիւնը. նա դեռ աւելի հեռուն է գնում: Վիտտէի օրգան «Русское Государство» № 20-ում վերջերս մի շատ ստարօտի, եթէ չասենք աւելին, յօդուած լոյս տեսաւ «Գիւղացիութիւնը և կուսակցութիւնները» վերնագրով: Տեսէք թէ ինչ երևելի խորհուրդներ է տալիս գրաֆը գիւղական պատգամաւորներին իր պաշտօնական օրգանի միջոցով:

«Մայրահեղ կուսակցութիւնների և երկրի ծայրերը ներկայացնող պատգամաւորների ձեռքում,—ասված է այդ յօդուածում,—գիւղական պատգամաւորները շատ վատ բաներ կարող են անել. Նրանք կարող են օրէնսդրական աշխատութիւնները անպտուղ դարձնել և մինչև իսկ այնպիսի դրութիւն ստեղծել, որ կառավարութիւնը ստիպված կը լինի ժամանակից առաջ ժողովը փակել. և որպէսզի այդպիսի բան չը պատահի, դրա համար մի ելք կայ միայն, այն է, որ այդ առողջ մտքի տէր, բայց քաղաքականութեան մէջ անվարժ գիւղական պատգամաւորները մինիստրական կուսակցութիւն կազմեն... Մինիստրական կուսակցութեան առաջնորդողներին յարելով, գիւղական պատգամաւորները վստահելի ղեկավարներ կը ստանան և հաւատարիմ կը մնան իրանց ընտրողների ցանկութեանը, որոնք նրանց կընտրեն և կուղարկեն, պատուիրելով՝ գնացէք Հայր-Թագաւորի մօտ և յարգեցէք նրա կամքը»:

Երևելի ու անհման միտք է, այնպէս չէ՞: Միթէ սրանից աւելի մեծ ցինիզմի կարող է հասնել մի կառավարութիւն: Ճիշտ է, եւրոպական բոլոր կառավարութիւններն էլ միշտ աշխատում են ընտրութիւնների վրայ ազդել ու պարլամենտում մեծամասնութիւն ունենալ, բայց ոչ մի տեղ և ոչ մի երկրում տեսնված չէ, որ կառավարութիւնը բացարձակ հալածանքի ենթարկէ հակակառավարչական կուսակցութիւնները, նրա անդամներին ժողովներից վռնդէ, ձերբակալէ, աքսորէ և վերջն էլ դեռ ընտրութիւններից առաջ սպառնայ «առողջ դատողութեան տէր, բայց քաղաքականութեան մէջ անվարժ» պատգամաւորներին, ասելով՝ «եթէ դուք օրէնսդրական ժողովում կառավարութեան կողմը չը բռնէք, ես ժողովը ժամանակից առաջ կը փակեմ և պատգամաւորներին կը ցրվեմ:»

Էհ, եթէ այդպէս է, այլ ևս ինչու համար է գրաֆը ընտրութիւնների կօմեդիան մէջ տեղ գցել ու շարունակում: Աւելի լաւ, հեշտ ու ապահով չէ՞ լինի, եթէ մինիստրութիւնը հէնց ինքը նշանակէ պատգամաւորներին և ուզած ժամանակը ժողովէ, հրաւիրէ: Չէ՞ որ այն եղանակով ընտրութիւնները, ինչպէս որ հիմայ են կատարվում, իրանց վերջնական հետևանքով մինիստրութիւնից նշանակվածի կերպարանք են ստանում: Ուրեմն ինչ կարիք կայ խնդիրը այնչափ երկարացնելու և հազարաւոր մարդկանց իզուր տեղը նեղութիւն տալու: Գուցէ կարելի լինի և առանց Պետական Դումայի էլ եօլա գնալ. չէ՞ որ գեներալ-նահանգապետները արդէն արմատախիլ են արել յեղափոխութիւնը և ամեն ինչ հանդարտվել, նախկին վիճակի մէջ է մտել... Իսկ եթէ Եւրոպայից փոխառութիւն անելու համար է այս ամբողջ ընտրողական կօմեդիան, դա էլ շատ ի զուր աշխատանք է. եւրոպացիք այնչափ էլ միամիտ չեն, որ չը հասկանան, թէ որտեղ է վերջանում ընտրութիւնը և որտեղ սկսվում նշանակովի պատգամաւորներ հաւաքելը, ինչպէս որ գրաֆ-մինիստրը չէ կարողանում հասկանալ, թէ որտեղ են վերջանում յեղափոխականները և որտեղ սկսվում սահմանադրական-ռամկավարականները:

Խ.

## Ի ՆՊԱՍՏ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

### I

Մեր ընթերցողներին ներկայացրինք մեր նախորդ համարներից մէկում այն կոչը, որ ուղղել էր Աւկլին, International Eastern Question Association-ի քարտուղարը, կազմելու համար մի միջազգային կոնֆերանս, բոլոր երկրների մեծանուն և վեհանձն գործիչների մասնակցութեամբ, ի նպաստ Թիւրքիայի ճնշված ժողովուրդների:

Այդ կօնֆերանսը տեղի ունեցել էր արդէն իր որոշված ժամանակին՝ փետրվարի 23-ին Լօնդօնում: Ահա նրա նկարագրութիւնը, որ քաղում ենք Pro Armenia-ից:

Ժողովին նախագահում էր Դ'Էստուրնէլ դը Կօնստան, Սարթի (Ֆրանսիա) սենատորը և յայտնի քաղաքական գործիչը: Իտալիայից ներկայ էին մեր ընթերցողներին ծանօթ Լուիջի Վիլլարին, Ֆրանսիայից՝ Պիէր Քիյարը և Ժան Լօգէն, ինչպէս և այլ և այլ երկրներից հետևեալ անձինք. Ստեֆէնսըն, Նօէլ Բուքսթըն, դոկտ. Բէյնօլդս, դոկտ. Ֆայրբէրն, Սուդվարկի եպիսկոպոսը, Շվան, սըր Ֆոուէլ Բուքսթըն, կանոնիկոս Մակկօլ, պր. Ագար Բիւ, Լօրդ Մօնքսուէլ, սըր Միտչէլ, Սերբիայի դեսպանը, Էրիկ Կօլլէն, Գուչ, Գրինվուդ, Աւկլին, Յակոբեան, Իսկենդէր, Չօպանեան, և այլն, և այլն:

Նախագահը կարդում է բազմաթիւ նամակներ, որոնցից առաջ բերենք հետևեալները.

Սիրելի ընկերակից և բարեկամ. Լօնդօնից, Արևելեան հարցի միջազգային յանձնաժողովի կողմից ուղղված հրաւէրը՝ ներկայ լինելու փետրվարի 22-ին կօնֆերանսին և ընթերքին—ստացայ:

Եթէ կայ մի բան, որ ինձ կարողանար մղել գալու այս րոպէիս Անգլիա, դա անկասկած ձեր նախագահութիւնն էր: Բայց մի ամսից ի վեր տիկին Բերթլօյի առողջութեան չափազանց ծանր դրութիւնը և իմ քաջ առողջութիւնս թոյլ չեն տալիս, աւա՜ղ, գալ Անգլիա:

Հետևաբար խնդրում եմ դուք անձնապէս ինձ չքնեղացնէք և թարգման լինէք իմ չքնաղանքներին ինչպէս և իմ ամբողջ ու կատարեալ համակրութեան դէպի այն նպատակը, որին ձգտում էք և այն նշանաւոր անգլիացիներին, որ այս դէպքում միանում են մեզ:

Ընդունեցէք և այլն:

Բերթլօ

Խնդրում եմ հաստատել մեր համագործակցութիւնը անգլիական ազնիւ ժողովրդի հետ հայերի և մակեդոնացիների պաշտպանութեան գործում, յանձինս որոնց բռնաբարված են, հակառակ դաշնագրերի, մարդկային բոլոր իրաւունքները:

Խմում եմ խիստ նշանաւոր և խիստ պատուական Ջէյմս Բրայսի կենացը:

Սեղմելով ձեր ձեռքը և այլն

Անատոլ Ֆրանս

Պարոն նախագահ,

Ձեր կօնֆերանսը, որ ձգտում է մարդկութեան բարիքին, չէ կարող ամբողջ աշխարհի համակրանքը չը վայելել: Ահա ինչու համար ես միանում եմ իմ ամբողջ սրտով և լաւագոյն բարեմաղթութեամբ փետրվարի 23-ի կօնֆերանսին: Դժբաղդաբար, իմ առողջական դրութիւնս, որ ինձ թոյլ չէ տալիս տանից դուրս գալ, անկարելի է դարձնում մասնակցել ձեր ժողովին: Անկեղծօրէն ցաւում եմ դրա համար, հաւատացած եղէք, որովհետև ինձ շատ հաճելի կը լինէր պատասխանել ձեր ազնիւ հրաւէրին:

Ընդունեցէք ևն՝ Ժօզէֆ, Կարդինալ-պատրիարք Լիզբօնայի:

Այնուհետև Պ. Դ'Էստուրնէլ դը Կօնստան բացատրում է իր բազմաթիւ բարեկամների ակամայ բացակայութեան պատճառը, բոլորն էլ նուիրված, ինչպէս ինքը, օսմանեան կայսրութեան հարստահարված ժողովրդների դատին, առանց ցեղի և կրօնի խտրութեան: Իր բոլոր ֆրանսիացի բարեկամները հաւատարիմ են մնում այդ ազնիւ դատին, որպէս այն դեռ ևս մօտ օրերում, երբ կազմակերպում էին Պարիզում, Շատօ դ'Օյի այնքան ժողովրդական ցոյցը:

Այդ ցոյցին մասնակցում էին բոլոր կուսակցութիւններին պատկանող հռետորներ, առանձնապէս, պ. պ. Դընի Կօշէն, Ժօրէս, դը Պրէսանսէ: Երկուսն էլ գործով բռնված են այսօր Պարիզում, պատգամաւորական ժողովի աշխատանքների և պատգամաւորական ընտրութիւնների մօտենալու պատճառով:

Նախագահը կարդում է Բերթլօյի մի նամակը, ուր մեծ գիտնականը ընդունում է, որ հասարակական կարծիքը այս րոպէիս շահագրգռված չէ թւում Ասիական և Եւրոպական Թիւրքիայի ցաւագին դրութեամբ: Դա կարելի է բացատրել այն ընդհանուր տագնապներով, որոնց ներկայ ենք լինում, ինչպէս օրինակ, ռուս-ճապօնական պատերազմը, յեղափոխութիւնը Ռուսաստանում, Մարօկկօյի հարցը: Բայց հասարակական կարծիքի վրայ ազդելու կարող ամեն անձի պարտականութիւնն է թոյլ չը տալ երբէք, որ նա անտարբերութեամբ վերաբերվի դէպի անարդարութիւնն ու չարիքը: Նա կարող է մի րոպէ ցրված թւալ, բայց երբէք չը պէտք է նա համակերպվի: «Մենք իրաւունք ունենք մեր անձնական տառապանքին վերաբերվել անտարբերութեամբ: Բայց երբէք իրաւունք չունենք անտարբեր լինել դէպի տառապող մարդկութիւնը»:

Պ. Դ'Էստուրնէլ մեծ ֆրանսիացու այս գեղեցիկ լեզուն բաղդատութեան է դնում այն լեզուի հետ, որ ինքը յաճախ լսել է մի մեծ անգլիացու, Գլադստոնի կողմից: Ուրիշ խօսքերով, բայց նոյն մտածումն էր արտայայտում Գլադստոն: Ահա իսկական, անդիմադրելի և անջնջելի սիրալիր համաձայնութիւնը, համաձայնութիւնը երկու քաղաքակրթութիւնների, որոնք կոչված են միմեանց լրացնելու և զօրացնելու համար:

Այդ համաձայնութիւնը բաւական չէ, որ միայն գոյութիւն ունենայ. Նա պէտք է գործէ բոլորի բարիքի համար և տարածէ իր օրինակի բարերար վարակումը: Այդ համաձայնութիւնը գործնականապէս արտայայտվել է արդէն Կ. Պոլսում: Գուցէ հէնց այդտեղ նա սկսել է լաւագոյն կերպով ապացուցանել իր գոյութեան իրաւունքը: Երկու դեսպաններ, մի անգլիացի դեսպան, Լօրդ Կըրրի, մի ֆրանսիացի դեսպան, պ. Պօլ Կամբօն միթէ երկուսով չէին իրագործել սիրալիր համաձայնութիւնը, հայերի պաշտպանութեան համար: Երկուսն էլ իրանց գործողութիւններով և թղթակցութիւններով նպաստել են վառ պահելու հասարակական կարծիքի անհրաժեշտ զայրոյթը և կառավարութիւնների բողոքը:

Այդ բողոքը մինչև այժմ ապարդիւն է մնացել, որովհետև Եւրոպան երկպառակված է: Դեռ երկար ապարդիւն կը մնայ մինչև այդ երկպառակութիւնները գոյութիւն կունենան և եւրոպական կառավարութիւնները դատապարտված կը լինեն անկարողութեան, ստիպված՝ սահմանափակելու իրանց գործունէութիւնը՝ իրանց անպտուղ ծախսերը բազմապատկելու և միմեանց կործանելու շրջանում միայն, մինչդեռ Սուլթանի կառավարութիւնը օգտվում է այդ անկարողութիւնից ճնշելու համար իր հպատակներին և արիւնլուայ անելու իր կայսրութիւնը:

Թիւրքական անկարգութիւններն ու կամայականութիւնները բղխում են միայն Եւրոպայի պառակտումից: Ամերիկայի Միացեալ-Նահանգների բարեացակամութիւնը և նախագահ Րուզվէլտի եռանդուն նախաձեռնութիւնը դարձեալ մնացած տառ կը մնան, որքան ժամանակ որ Սուլթանը կը կարողանայ շահագործել պետութիւնների հակառակութիւնները և ապրել, եթէ կարելի է այսպէս ասել, եւրոպական միլիտարիզմով:

Հետևաբար չը դադարենք խարանելու Սուլթանի կառավարութիւնը ինչպէս մի ոճիր և մի ամօթանք մեր քաղաքակրթութեան համար: Բայց կոչենք բոլոր ժողովուրդներին միանալ մեզ և վերջ դնել այդ ամօթանքին, որոնց պատասխանատու են հէնց իրանք: Կոչենք դէպի մեզ ոչ միայն պետական գործիչներին, պարլամենտներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին և մարդասէրներին—աւելի բազմաթիւ գուցէ Անգլիայում քան որ և է այլ երկրում—նոյնպէս և այն բոլոր մարդկանց, որոնք արդիւնաբերում են, բոլոր աշխատաւոր մարդկանց, սկսած գիտութեան մարդից մինչև առևտրական մարդը:

Երկաթուղային գծեր, ինժեներներ, դպրոցներ, ճանապարհներ, կամուրջներ, պօստի և հեռագրի բիւրօներ—ահա այն գերազանց գործիքները, որով պիտի կարողանանք բարեկարգել Արևելքը. մի անգամ որ հաղորդակցութիւնները կը հաստատվեն Եւրոպական Թիւրքիայի կենտրոնների և Ասիայի միջև, շուտով բարգաւաճումը, ապահովութեան հետ կը վերադառնայ այնտեղ. այդ դժբաղդ, սպառված երկիրը նորից կերջանկանայ և կը հարստանայ, փոխանակ մի գլխացաւանք լինելու, կը դառնայ մի թանկագին աղբիւր Եւրոպայի և Ամերիկայի վաճառականութեան:

Եթէ Արևելքի ճնշված ժողովուրդների պաշտպանների ձայնը չը լսվեց, Թիւրքական անկարգութիւնները կը մնան իբրև ամենօրեայ սպառնալիք աշխարհի խաղաղութեան: Նրանք, որոնք առաջարկում են քաղաքակիրթ պետութիւններին վերջ դնել այդ անկարգութիւններին, առաջարկում են ոչ միայն մի բարի, այլ և շահաւէտ գործ:

Հարցը՝ մի քանի աւազակների կողմից աւերված երկիրը՝ խաղաղ, արդիւնաւէտ և վաճառաշահ մի երկրի փոխելն է:

Խօսեցին և ուրիշներ, որոնց մասին յաջորդ անգամ:

## ՌՈՒՄԱՆԱՀԱՅԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՌՈՒԶՎԷԼՏԻՆ

Արտասահմանի հայութիւնը շարունակում է դիմել նախագահ Րուզվէլտին նրա միջամտութեան առիթով: Մենք տուեցինք մեր նախորդ համարներից մէկում բուլղարահայերի դիմումը: Ահա ռումինահայերի կոչը, ուղղված հեռագրով նախագահ Րուզվէլտին.

«Բուխարեստի հայ գաղթականութիւնը ձեզ երախտապարտ է այն մարդասիրական զգացմունքների համար, որ դուք տածում էք դէպի հայ ժողովուրդը և խնդրում է ձեզանից ներկայացնել հայկական հարցը Հաագայի կօնֆերէնցիային: Կատարելով այդ, դուք կը փրկէք մի ամբողջ ժողովուրդ յուսահատութիւնից և կաւելացնէք քաղաքակրթութեան պատմութեան վրայ ամենափառաւոր էջերից մէկը»:

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Երկուշաբթի, մարտի 6-ին կայացաւ քաղաքային խորհրդի նիստը, որ զբաղվեց հետևեալ խնդիրներով՝ 1) Քաղաքի գործակալ Քոչարեանցը՝ ծառայելով 31 տարի քաղաքային վարչութեանը և մօտ օրերս վախճանվելով—այրին հարց էր արծարծել սահմանել կենսաթոշակը յատկացնելու հանգուցեալի ժառանգներին: Քաղաքային խորհուրդը օրինաւոր ճանաչելով այդ խնդիրը՝ որոշեց կենսաթոշակ նշանակել տարեկան 960 ր., որպիսի ռոճիկ ստանում էր հանգուցեալը, 2) Քաղաքային լօմբարդի 1605 թւի հաշիւները քննելու համար ընտրվեցին երկու իրաւասու՝ պ. պ. Թումաժեվ և Կազակով, 3) Քաղաքային վարչութեան 1904 թւի հաշիւները քննելու համար գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց մի յատուկ մասնաժողով՝ տասը իրաւասուներից բաղկացած, 4) Ինչպէս յայտնի է, ներկայ ուսումնական տարուց, քաղաքային վարչութեան նախաձեռնութեամբ Հալաբարում բացված է արական սեռի համար մի պրօգիմնազիա, որի պահպանութեան համար քաղաքը տարեկան 15,000 րուբլի է յատկացրել: Օրէնքը պահանջում է, որ քաղաքը իր կողմից՝ մանկավարժական ժողովներին ներկայ լինելու և մասնակցելու համար իր ներկայացուցիչը ունենայ. այդ մտքով դեռ սեպտեմբեր ամսին դիմել էր քաղաքային վարչութիւնը կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուին, բայց այդ կարևոր հարցը զանազան պատճառներով, մանաւանդ առաւել ևս քաղաքիս խառնակ վիճակի պատճառով մինչև այժմ յետաձգված էր: Մարտի 5-ի նիստին՝ հերթական խնդիր լինելով—բաւական ուշադրաւ խօսակցութիւնների և միջնադէպքերի նիւթ դարձաւ այդ հարցը: Այսպէս օրինակ՝ իրաւասու պ. Գ. Կիրակոսեանը (հնչակեան) առաջարկեց խորհրդին պատգամաւորների ընտրութիւնը թողնել իրանց՝ Հալաբարցիներին. անտարակոյս այդ առաջարկութիւնը շատ խելացի և նպատակայարմար էր և այդ առաջարկութեան յարեց բժ. Վարդանեանը, բայց ընտրութիւնը չը կայացաւ, որովհետև քուէարկութեան ժամանակ հէնց պատգամաւոր ընտրելու տուփը դնելով—իրաւասուները ցրվեցին և ընտրութիւնը դարձեալ յետաձգվեց, 5) Ամենից հետաքրքիրն էր, և որը մտքերի երկար փոխանակութեան առարկայ դարձաւ, Թիֆլիսի Մետեխի նահանգական բանտի մէջ կալանաւորվածների կերակուրի և սնունդի մասին արած զեկուցումը քաղաքագլխի պաշտօնակատարի կողմից: Այդ զեկուցումից իմացվեց, որ նահանգական բանտի շէնքը և բոլոր մասերը շատ ողորմելի տեսարան են ներկայացնում. ինքը շէնքը միանգամայն մի խարխուլ, խոնաւ և առողջապահական ամենատարրական պահանջներին անհամապատասխան, լոյսից և այլ յարմարութիւններից զրկված ախոռի նման մի վայր է, սնունդը ևս թէ հիւանդանոցում և թէ նոյն իսկ բանտում շատ ողորմելի և աննախանձելի դրութեան մէջ է: Մետեխի բանտում կալանաւորվածները այն աստիճանի շատ են, որ ոմանք այդ կալանաւորվածներից գիշերը յատակի վրայ թափված են քնում, անկողին, սպիտակեղէն, հագուստ և այլն—բոլորը կեղտոտ և անտանելի. սնունդի համար իւրաքանչիւր բանտարկվածի վրայ ծախսվում է օրական 8 կօպէկ: Այս տեղեկութիւնները, քաղաքային խորհուրդը յանձնել էր քաղաքագլխի պաշտօնակատար Խ. Ջերբէզովին՝ տեղն ու տեղը հաւաքել և ուսումնասիրել խնդիրը՝ որ ըստ այնմ քաղաքը՝ նիւթական նպաստ յատկացնելով բանտարկվածների վիճակի բարելաւութեան համար որոշէ՝ թէ ինչ ձևով և որքան կարող է այդ նպաստը իր նպատակին հասցնել տալ: Իրաւասու իշ. Ա. Մ. Արղութինսկին յայտնում է, որ լսելով բանտի և նրա մէջ կալանաւորվածների դրութեան տխուր իրականութիւնը, ինքը այն եզրակացութեան է գալիս, որ պատկերը շատ աւելի մռայլ և ողբալի է եղել, քան թէ նախընթաց նիստի մէջ նկարագրածը և որ բանտի հոգաբարձուների և վերատեսուչների ցուցակը ձեռք բերելով, որոնք բոլորն էլ բուրժուա և հարուստ դասակարգի մարդիկ են—և հեշտութեամբ կարող են, եթէ կամենան, իրանց միջոցներով հոգալ ու բարելաւել բանտարկվածների վիճակը, նա ստիպված է նորից հաստատել, որ այդ հոգաբարձուները միմիայն շքանշանների և աստիճանների համար են իրանց գլուխը մէջ խցկում, իսկ դրանց գործունէութիւնը անպտուղ է և միայն յանցաւոր՝ բանտարկվածների վիճակի վերաբերութեամբ, ուստի իրաւասուի կարծիքով, քաղաքը չը պէտք է այլ ևս 1500 ր. նպաստ տայ հոգաբարձութեանը, այլ պէտք է այս կամ այն ձևով ինքը մի գումար ծախսէ

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ՓՈՔՐԻԿ ԶԱՆԳԱԿԸ

Երեխաներն այդ օրը չափազանց ուրախ էին. դպրոցի ծառան, ծերունի Պօղոսը, որին մի բան հասկացնելու համար հարկաւոր էր նախ՝ լաւ մաքրել թօքերը և ապա՝ երկու տակ կռացած՝ մօտեցնել շրթունքները նրա աջ և անպատճառ աջ ականջին, երևի, լաւ չէր լսել իմ կարգադրութիւնն և վաղ առաւօտեան կախել էր նոր առնված զանգը դպրոցի լայն ու երկար նախասենեակի անկիւնում: Դասերից առաջ խումբ-խումբ հաւաքված առաջին բաժանմունքի դրան մօտ, ուր իր լայն բերանով, հաստ լեզուակով ու երկայն թոկով, վեհ ու հպարտ՝ կախ էր ընկել նոր, փայլուն զանգը՝ երեխաները խորին պատկառանքով ու ակնածութեամբ նայում էին նրան և զանազան նկատողութիւններ անում նրա մասին:

—Է՛, հիմա վերջացաւ. էլ չես կարող վերակացուին ասել, թէ զանգի ձայնը չը լսեցի. ով գիտէ սրա ճնկոցը մինչև «Մաղկունց-Մեյդանը» կը հասնի,—ասում էր բարձր դասարանի աշակերտներից մէկը:

Մի փոքրիկ երեխայ երկրորդ բաժանմունքից՝ ուրախ-ուրախ թռչկոտում էր մէկ ոտքի վրայ և նոր եկողներին աւետիս տալիս.—

—Տղէք, նոր զանգ, նոր զանգ:

Եւ ամեն անգամ այս նորութիւնը հաղորդելուց յետոյ փոքրիկ «ճնճուն» աւելի մեծ աշխուժով սկսում էր վեր-վեր թռչել ու եռանդով ուռցնել լիք, կարմիր թշերը հաց ու պանրի բրթուճով:

Բայց ահա եկաւ Ռուբէն Կարճիկեանը՝ «սատանի ականջը», ինչպէս անուանում էին նրան ընկերները: Ռուբէնը մեծ, խոժոռ աչքերով, փոքր ինչ նիհար, թուխ դէմքով, սև, փայլուն մազերով մի երեխայ՝ արդէն որոշ հեղինակութիւն էր վայելում իր ընկերների շրջանում, չը նայելով որ առաջին բաժանմունքի աշակերտ էր. նա ճարպիկ էր, հնարագէտ, ընդունակ, սովորում էր ամենքից լաւ դասարանում և ամենից շատ չարութիւններ անում դասամիջոցների ժամանակ: Ես սաստիկ սիրում էի այդ փոքրիկ որբուկին, որ իր մանկական սովորութիւններով ու բնաւորութեամբ յիշեցնում էր ինձ մի այլ որբ ու անտէրունջ՝ վաղուց անցած մանկութիւն... Մի քանի ամիս առաջ փրկված փողոցային թափառումներից՝ նա դարձել էր ուսուցիչների որդեգիրը, «ուսուցչական ճուտը», ինչպէս յաճախ անուանում էին նրան իրանց մէջ իմ ընկերները: Եւ պէտք է ճշմարիտը խոստովանել, որ որդեգրող ուսուցիչները ամենայն սիրով հոգում էին իրանց «ճուտի» ոչ միայն շորերի, դասագրքերի, դասական այլ պիտոյքների, այլ և ապրուստի մասին... Եւ փոքրիկ Ռուբէնը խոստանում էր արդարացնել ամենքի յոյսը. չը նայելով իր նախընթաց փողոցային կրթութեան՝ նա զարմանալի անմեղ, ճշմարտախօս, հետաքրքիր և դուրեկան երեխայ էր—ամենքի փայփայանքի և սիրոյ առարկան:

Երբ Ռուբէնը մտաւ նախասենեակ՝ մի ակնթարթում դասագրքերի պայուսակը շպրտեց պատուհանի գոգը և ցրտից կարմրած ականջները տրորելով՝ վազեց այն անկիւնը, ուր հաւաքվել էին աշակերտները:

—Օհօ, ինչ լաւն է և ինչպէս մեծ ու փայլուն,—բացականչեց Ռուբէնը նայելով զանգին և արագ-արագ շնչելով կապտած ձեռներին վրա.—գրազ կը գամ, որ սա աւելի մեծ է, քան եկեղեցու զանգը: Ապա մի անգամ երգէք, հոգիս, տեսնենք ինչպէս է ձայնդ:

Եւ փոքրիկ չարաճճին մտաւ շտապով առաջին բաժանմունք, դուրս բերեց այնտեղից ուսուցչական աթոռը, կանգնեց նրա վրա և հասաւ այն մեխին, ուր վրայ փաթթված էր զանգի պարանը:

—Դը՜նկ... դը՜նկ... դը՜նկ... հնչեց նոր զանգի ձայնը:

Լուռ և տխուր նստած էի ես ուսուցչական սենեակում միայնակ և դրան փոքրիկ բացվածքից տեսնում էի այն ամենը, ինչ որ կատարվում էր նախասենեակում: Ուրիշ ժամանակ ես անշուշտ դուրս կը գայի սենեակից և նկատողութիւն կանէի Ռուբէնին անկարգութեան համար, բայց այդ օրը... իմ բերանս չէր բացվում նկատողութիւններ անելու և ես չէի կամենում վշտացնել և ոչ մէկին մեր փոքրիկներից, եթէ նոյն իսկ աւելի խոշոր անկարգութիւն էլ անէին:

—Դը՜նկ... դը՜նկ... դը՜նկ... նորից հնչեց նոր զանգի ձայնը: Հաստ, կոշտ-կոպիտ, սպառնալից էր այդ ձայնը, սակայն նրա մէջ միևնոյն ժամանակ, մանաւանդ հանգչելիս, լսվում էր մի տարօրինակ տխուր խաղ, մի բռնի մաշող շունչ, մի խեղդված հառաչանք... Նախասենեակի բարձր կամարները տխուր, տառանվող-մելամաղձոտ արձագանք տուին նրան, բայց աւելի տխուր արձագանք կրկնեց իմ սիրտս, ուր, կարծես, մի ինչ-որ բան կտրվեց, մի ինչ-որ բան շարժվեց ու կուչ եկաւ անտանելի ցաւով:

«Մեռելաթաղի ղօղանջի՜ն»,—անցաւ իմ մտքից...

### II

Երևի, երեխաներին էլ դուր չեկաւ նոր զանգի անախորժ ձայնը. Նրանք ցրվեցին նախասենեակում և այլ ևս չը մօտեցան այն անկիւնին, ուր կախված էր զանգը:

Անցաւ կէս ժամ, գուցէ և աւելի,—ուսուցիչներից ոչ ոք չէր գալիս: Ամբողջ գիշեր ես չէի կարողացել աչքս փակել և առաւօտեան վաղ վազել էի ուսումնարան՝ երևի, յուսալով, սովորականի նման, հոգեկան հանգստութիւն գտնել երեխաների ուրախ, սիրելի շրջանում: Բայց այս անգամ դուր ու ապարդիւն էր իմ յոյսս.—ուսումնարանում տրտմութիւնն աւելի զգալի էր, մտքերն աւելի մռայլ, թախիծն աւելի մաշող ու մորմոքիչ... Ես չէի կարողանում դուրս գալ նախասենեակ, շրջել աշակերտների մէջ, նայել նրանց ուրախ, զուարթ երեսներին: Ո՛չ, դա դժուար, անհնարին էր ինձ համար. դա իմ ոյժից վեր էր...

Նստած շարունակ ուսուցչական լայն ու երկար սեղանի առաջ, որ ծածկված էր կանաչ, խունացած մահուդով և որի վրայ թափթփված էին նախընթաց օրվայ լրագիրները,—ուսուցչական սենեակը միևնոյն ժամանակ ընթերցարան էր մեր դպրոցի նախկին սաների համար,—ես մեքենայաբար թերթում էի լրագիրներն և աշակերտական մատեանները, թէև ոչ մի բան չէի որոնում նրանց մէջ: Ձմեռային թանձր, սպիտակ մառախուղը նստել էր պատուհանների վրա. եկեղեցու գմբեթից, բացի մի քանի ծառերի ստուերներից, ոչինչ չէր երևում. նոյն իսկ եկեղեցին, որ հազիւ միերկու տասնեակ քայլ հեռու էր դպրոցից, ամբողջովին թաղվել էր մշուշի երերուն պատանի մէջ. աշակերտների անհոգ ծիծաղն ու խօսակցութիւնը, որոնք լսվում էին նախասենեակից, սուր ասեղների նման, ծակծկում էին իմ սիրտս:

Ա՜խ, գոնէ շուտով վերջանար...

—Դը՜նկ... դը՜նկ... դը՜նկ...

Նորից մի մելամաղձոտ ղօղանջին տարածվեց նախասենեակում. ես մինչև անգամ չը նայեցի դրան բացվածքից, թէ ով է այս անգամ անկարգութիւն անողը:

Իմ հայեացքս պատահմամբ ընկաւ մեր հին, փոքրիկ, վաղուց փայլը կորցրած-սևացած զանգակի վրա, որ համեստութեամբ, իբր աքսորական, կուչ էր եկել պատուհանի գոգում և ուրիշ անկարևոր առարկաների ու թղթի, կեղտի հետ միասին պէտք է անյիշատակ դուրս ձգվէր ուսուցչական սենեակից:

Խե՜ղճ, փոքրի՜կ զանգակ, դու այլ ևս պէտք չես. քո արծաթահնչիւն, բարակ, ուրախ ծրնկծրնկոցը այլ ևս չենք լսելու մենք...

Անթարթ աչքերով ես երկար նայում էի զանգակին և ակամայ յիշում անցեալը: Այո, մեր ուսուցչական երջանիկ կեանքը արդէն մի տխուր անցեալ էր և մենք այդ օրը պէտք է ներկայ լինէինք նրա վաղահաս վերջալոյսին: Եւ չը գիտեմ ինչու այդ անցեալը, որ արդէն թւում էր ինձ, իբրև մի վաղուց անցած—կորած երջանկութիւն, կապվում էր իմ մտքում փոքրիկ զանգակի ուրախ ծրնկծրնկոցի հետ:

Ես ակամայ յիշեցի ամառնավերջի այն գեղեցիկ առաւօտը, երբ աշակերտական նստարանից նոր վերկացած՝ անմազ-անմօրուք մի երիտասարդ, համարեա մի պատանի, առաջին անգամ անհամարձակ քայլերով ու շփոթված՝ ներս մտայ «մեր» դպրոցի շէմքից և ներկայացայ տեսչին, իբրև նոր նշանակված վերակացու: Տեսուչը՝ մի մէջահասակ, խստահայեաց պարոն՝ սուր, կասկածոտ հայեացքով չափեց իմ հասակս ոտքից մինչև գլուխ և աւելի շփոթեցրեց ինձ իր հեգնական ժպիտով: Անշուշտ, նրան դուր չեկաւ իմ ուսուցչական պաշտօնազգեստս: Եւ, յիրաւի այն մոխրագոյն կիսամաշ վերնաշապիկը, այն «Թիւլ ու դերձան» խունացած անդրավարտիքն և այն անգթօրէն կարկատած, բայց և այնպէս վիրաւոր կօշիկները, որ ես հագել էի, աւելի նմանեցնում էին ինձ մի չքաւոր, թոշակառու աշակերտի քան ուսուցչի: Միւս ուսուցիչները, որոնց հետ ինձ ծանօթացրեց տեսուչը, նայում էին իրար երես և նոյնպէս խորհրդաւոր կերպով ժպտում: Յանկարծ նրանցից մէկը չը կարողացաւ զսպել իրան և սկսեց բարձրաձայն ծիծաղել. միւսները յետ չը մնացին, մինչև անգամ տեսուչը: Ես կարմրեցի մինչև ականջներս և քիչ էր մնում լաց լինէի երեխայի նման: Բայց տեսուչը շուտով զսպեց ծիծաղը և մօտենալով ինձ՝ ձեռքը բարեկամաբար դրեց իմ ուսին:

—Խնդրեմ, չը նեղանաք, պարոն, մեր ծիծաղը ամենևին չէ վերաբերում ձեր... ձեր անձնաւորութեանը,—ասաց տեսուչը մեղմ, գուրգուրացնող ձայնով, որով խօսում էր փոքրիկ աշակերտների հետ,—դուք այսուհետև մեր ընկերն էք և շուտով կը համոզվէք, որ մենք սովորութիւն չունենք ծիծաղել ընկերների վրա. բայց բանն այն է, որ դուք հրաւիրված էք կատարելու վերակացուի պաշտօն, և դա ամենադժուար պաշտօններից մէկն է մեր դպրոցում. մեր աշակերտները բազմաթիւ են, մի քիչ չար և սիրում են կատակներ անել. ձեր վերնաշապիկը... որպէս ուսուցչի հագուստ... կարող է գրաւել նրանց ուշադրութիւնը և տեղիք տալ կատակների: Բարձր դասարաններում մենք ունենք աշակերտներ, որոնք հասակով պակաս չեն լինի ձեզանից: Շատ լաւ կանէք, որ փոխէք ձեր աշակերտական վերնաշապիկը և հագնէք ուսուցչական սովորական հագուստ:

Ես նայեցի տեսչի խիստ, բայց բարի դէմքին և իսկոյն հանգստացայ. նա խօսում էր անկեղծ, ինչպէս մի մեծ եղբայր, լոկ մի բարի խորհուրդ տալու ցանկութեամբ:

—Շատ լաւ, պարոն տեսուչ, բայց ես... առ այժմ միջոց չունեմ «ուսուցչական, սովորական հագուստ» գնելու,—հազիւ հազ կարողացայ ես պատասխանել:

—Հա՛, ուզում էք ասում, այդ իմ գործն է և ես կը հոգամ դրա մասին, թէև... մեր հոգաբարձութիւնից փող պոկելը, նոյն իսկ իբրև ռոճիկ, մի կատարեալ հերոսութիւն է:

Եւ տեսուչը նորից ժպտաց ու քնքշութեամբ նստեցրեց ինձ աթոռի վրա: Ուսուցիչները, բոլորված իմ շուրջս, անթիւ հարցեր էին տալիս ինձ, հարցեր, որոնք վերաբերում էին այն դպրոցին, ուր մենք ամենքս էլ աւարտել էինք:

—Ինչպէ՞ս է պարոն Գրիգորը, արդեօք դեռ չէ՞ ծերացել:

—Ի՞նչպէս է Ալօյեանը. ինչ նոր անեկդոտ է պատմել նա իրանց տան ու կնոջ օժիտի մասին:

—Ի՞նչպէս էք անցկացնում ժամանակը կրօնի և տոմարագիտութեան դասերին:

—Շատ էր ձեր հոգին հանում տէր-Եզնիկը իր «փօ է փօյով»:

Եւ այդպէս անվերջ...

Ես հազիւ կարողանում էի պատասխանել հարցերի այս տարափին:

բանտարկվածների վիճակը բարելաւելու համար: Իրաւասու և վարչութեան անդամ պ. Ա. Խատիսեանը բացատրում է, որ 1500 ր. նպաստ տալով համարեա թէ ոչ մի փոփոխութիւն չէ կարող առաջացնել բանտարկվածների սնունդի մէջ, որովհետև ամենապարզ օրական իւրաքանչիւրի համար հարկաւոր է սնունդի ծախս նշանակել գոնէ 30—35 կ., որ հնար լինի քիչ թէ շատ մարդավարի կերակուր տալ, այն ինչ դրա համար հարկաւոր է, որ քաղաքը ոչ թէ տարեկան 1500 ր. այլ 12—15,000 ր., իսկ այդպիսի գումար քաղաքը, որի արդիւնքները նուազել են և այլ անհրաժեշտ ծախսեր ունի կատարելու —չէ կարող տալ, ուստի առաջարկում է դիմել և միջնորդել բանտային գլխաւոր վարչութեան, որ նա հոգայ հարկաւոր ծախսերը: Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ քաղաքային խորհուրդը կայացրեց հետևեալ վճիռը՝ 1) յատկացնել բանտարկվածների ընդհանուր վիճակը բարելաւելու համար քաղաքային միջոցներից տարեկան 2000 ր. այն պայմանով, որ այդ գումարը ծախսվելիս անմիջապէս մասնակցեն քաղաքի կողմից ընտրված ներկայացուցիչներ, 2) միջնորդել Պետերբուրգի բանտային գլխաւոր վարչութեան առաջ, որ բոլոր հարկաւոր ծախսերը, քիչ թէ շատ կարգին վարելու բանտային գործը, հոգայ ինքը—վարչութիւնը, և 3) բանտային հոգաբարձուների և վերատեսուչների ընտրութեան սիստեմը փոխելու համար որոշ դիմումն և միջնորդութիւն յարուցանել նահանգապետին այն մտքով, որ հոգաբարձական կազմի մէջ քաղաքային ինքնավարութիւնը մօտիկ մասնակցութիւն ունենայ և կարող լինի հարկաւոր բարեփոխութիւնները մտցնել: Նիստը փակվեց գիշերվայ ժամի 11½-ին:

## ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊՐՈԳՐԷՍԸ

Ի՞նչ դեր է խաղում ընդհանրապէս հոգևորականութիւնը առաջադիմութեան և մասնաւորապէս յեղափոխութեան մէջ. նա առաջխաղաց տարր է՞ թէ յետադէմ, և եթէ յետադէմ՝ ինչու, և արդեօք կարող է այլ կերպ էլ լինել:

Մի երկու հարց էլ տանք և սրանցից սկսենք պատասխանել:

Ի՞նչպէս է ծագել հոգևորականութիւնը, ո՞րն է նրա դերը, ի՞նչ է նա:

Հոգևոր և մարմնաւոր իշխանութիւն—սրանք մարդկութեան կեանքում հաւասար և միատեսակ դեր խաղացող գործօններ են, յար և նման բնութեամբ: Դրանց սնել է նախնական մարդկութեան մտքի տհասութիւնն ու սօցիալական կեանքի կազմի թուլութիւնը, նրա անապահով գոյութեան երկիւղը:

Նախնական մարդու խակ միտքը, անհասկացողութիւնը և իր նման բնութեան առաջ անպատրաստութիւնն ու անզօրութիւնը նրան շարունակ վախի մէջ են պահել երկու բանից. բնութիւնից, իր բոլոր ուժերով և երևոյթներով, և իր ուժեղ ընկերից, իր նմանից:

Սկզբում երկուսն էլ նրա համար լոկ նիւթական, անտեսական պատուհասողներ էին, սակայն պատմական զարգացման ընթացքում առաջինը դարձաւ նրա հոգեկան, իսկ երկրորդը մարմնական կեանքի տէրը: Ուստի սկզբից և եթ նա երկուսին էլ հաւասարապէս ենթարկվել, խոնարհվել, իր գլխին իշխանաւոր է ճանաչել:

Ահա այսպիսով են առաջ եկել հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնները և իրանց, այսպէս ասած, իշխանական բնութիւնը պահել մինչև այժմ:

Իշխանական կամ իշխանաւոր բառը արդէն ընորոշում է այդ երկու, հոգևոր ու մարմնաւոր իշխանութիւնների կամ կառավարութիւնների բնաւորութիւնը, նրանց էութիւնը, ընդհանուր գոյնը:

Ուրեմն ամեն մի իշխանութեան առաջին յատկանիշը իշխելն է, որի հետ սերտ կապված է ճնշելը:

Իշխել ու ճնշել—դա թէ հոգևոր և թէ մարմնաւոր կառավարութիւնների էութիւնն է:

Ինչու:

Մարդու բուսական, կենդանական տրամադրութիւնը ասում է. աշխատի՛ր որքան կարող ես հանգիստ ու առանց շատ նեղութեան ապրել, վայելել:

Սակայն սրա համար մի բան է հարկաւոր. —ոյժ:

Ուրեմն ով ոյժ ունի՝ նա կարող է վայելել:

Իսկ կան երկու ոյժեր, հոգևոր և մարմնաւոր. մէկը հոգու և մտքի, իսկ միւսը ֆիզիքական ոյժը:

Ուստի սկզբից և եթ եղել են անհատներ, որոնք վայելելու փափագից դրդված ձգտել են առաջին կամ երկրորդ ոյժին տիրանալ:

Սակայն այս դեռ առաջին քայլն է. տիրելուց յետոյ պէտք է իշխեալներին աւելի թեղուն կերպով շահագործել էլ գիտենալ, պէտք է դրա համար աւելի նուրբ ու բազմակողմանի պայմաններ ու հանգամանքներ հնարել, կամ այլ խօսքով իշխելու համար աւելի բազմաթիւ ու բազմայարկ ցանցեր ու ծծակներ ստեղծել:

Այս է երկու իշխանութիւնների էութիւնը, գլխաւոր, ընդհանուր և բնորոշ յատկութիւնը: Երկուսն էլ իրանց կառավարութեան մէջ միևնոյն կերպ են վարվում:

Հոգևոր կառավարութիւնը կամ հոգևորականութիւնն աշխատել է իր իշխանութեան կամ գոյութեան համար նպաստաւոր պայմաններ ու հաստատուն հող պատրաստել և պահել այդ միշտ և ինչպէս որ կայ, քանի ինքը ուզում է գոյութիւն ունենալ...

Իսկ հաստատուն հողը խաղաղ ամբոխն է, իսկ խաղաղ ամբոխն է՝—խաւար ամբոխը. մի ոչ աչքաբաց ամբոխ, որ անվէճ լինի իր շահերին, չիմանայ իր չարն ու բարին:

Եւ հոգևորականութիւնն ևս իբրև իշխող, իբրև արտօնեալ դաս հասկացել և պահպանել է իր գոյութեան հիմքը այնպէս՝ ինչպէս պահպանել է մարմնաւոր իշխանութիւնը:

Հոգևորականութիւնը իր սեփականութիւնն է համարել գիրը, ուսումը և շատ քիչ աշխատել նրա տարածման համար, որ եղել է միակողմանի, զուտ կրօնական: Նա միշտ ժողովրդին հեռու է պահել իսկական ուսումից, գիտութիւնից: Հոգևորականների դասը իշխելով մարդկութեան հոգու և մտքի վրա՝ ձգտել է շարունակ նրա միտքը խճողել ցնորական բարբաջանքներով, վառել, բորբոքել դաւանաբանական անմիտ բանձեքներով ու բառախաղերով՝ իրանց համար նպաստաւոր մի զէնք—ֆանատիկոսութիւն—ձեռք բերելու համար:

Հոգևորականութիւնը սպանել է ժողովրդի միտքը. նա յաճախ իր նպատակի համար աղճատել է կրօնի դոգմաները, քրքրել ու նրանց տակից հանած խճողած, խրթին ու անմիտ մեկնութիւնների սև ժխորով բթացրել մարդկանց միտքը: Հոգևորականների պարապ-սարապ գլուխները տառակերութիւնների ու քաղքըշուկ մեկնաբանութիւնների այնպիսի մի քաօս են ստեղծել և դարեր շարունակ ժողովրդի միտքը դրանով տանջել, Գողգոթա հանել, որ եթէ իմանար Մարդոյ Որդին, գուցէ աշխարհը չը գար. մի քաօս, որից իրանք, կրօնի ներկայացուցիչները անգամ միայն մի բան են հասկացել, որ ոչինչ չեն հասկացել:

Եւ սրանով յաճախ տեղիք են տուել ամենաբարբարոս ու վայրագ պատերազմների, ջարդերի, հալածանքների ու «քննութիւնների» և մաշել, սպառել մարդկութեան իսկական և պիտանի ոյժերը:

Բարոյականութեան տեսակէտից ևս հոգևորականութիւնը՝ հակառակ իր կոչման՝ ապիկար դերի մէջ է եղել և է. նա յաճախ յանուն իր շահերի, ժողովրդին եթէ բացարձակ չէ քաջալերել դէպի անբարոյականութիւն՝ գոնէ ակտիւ դեր էլ չէ խաղացել, չէ աշխատել կրճատել այն: Սրան ապացոյց կարող է լինել հրէաների մէջ Եահվէին նուիրված սուրբ անբարոյականութիւնը, հիերոդուլները—հին Յունաստանում տաճարների եկամուտի համար անբարոյականութեամբ պարապվող սուրբ-կուրտիզանները: Ապա հէնց ինքը, հոգևոր դասը բարոյապէս շատ էլ բարձր չէ եղել. օրինակ՝ հէնց ամենատարածված և ամենամեծ եկեղեցիներից մէկի, կաթոլիկութեան հոգևորականութեան բարոյականութիւնը շատ ընկած է եղել. պապերի պալատները ամենազազիր անբարոյականութեան որջեր են եղել (օրինակ՝ Յուլիոս II-ի ժամանակ): Իսկ յայտնի է, որ Ալեքսանդր II պապը խառնակվում էր նոյն իսկ իր աղջկայ հետ:

Կուսակրօնութիւնն էլ ըստ ինքեան մի անբնական երևոյթ լինելով՝ նաև անբարոյական երևոյթ է և միայն անբարոյականութեան տարածմանն է նպաստում: Կուսանոցներ ու վանքերը անառակութեան վայրեր են, և փաստ է, որ այն շրջանները կամ տեղերը, ուր որ և է նման հաստատութիւն կայ՝ այնտեղի բնակչութեան բարոյականութիւնը աւելի է ընկած:

Կուսակրօնութիւնը խաւարի մնացորդ է և ագիտութիւնն է նրան պահպանողը:

Իշխելով ժողովրդի հոգուն ու մտքին՝ հոգևորականութիւնը աշխատել է դրա թռիչքների թափը մեղմացնել ու դէպի մի մշուշային ապագայ ուղղել և մարդկանց հանդերձեալ կեանքի երևակայական քաղցրութեամբ խաբելով մոռացնել է տուել ռէալ կեանքի կռիւ ու կոպիտ իրականութիւնը և մեղմել դրա բարօրութեան ձգտումը: Նա այնքան հրապուրիչ ներկայացնելով դրախտ՝ քարոզել է կըտրվել, անտարբեր վերաբերվել այս աշխարհի կեանքին և դրանով էլ դժոխք է դարձրել այս. շնորհիւ այսպիսով դէպի անմխիթար իրականութիւնը պատուաստած անփոյթ հայեացքի՝ նա ժողովրդին տնտեսական քայքայման մէջ է պահել: Ի հարկէ այս աշխարհի ունայնութիւնը միայն ժողովրդի համար է և ոչ նաև իրանց, հոգևոր հայրերի:

Բացի այդ՝ շնորհիւ իրանց ինքնաստեղծ հեղինակութեան, նրանք, իբրև իշխողներ, իբրև արտօնեալ դաս միայն հարստահարել են միշտ ժողովուրդին: Զանազան սրբավայրեր լոկ կեղեքման վայրեր են եղել և շատերի համար եկամուտի, ապրուստի աղբիւր են մինչև այժմ, ուր ժողովուրդը դիզում է իր ունեցածից առատ բաժիններ:

Հարստահարելու բացի այդ հեշտ ու անգիտակից միջոցից՝ հոգևորականութիւնը ստեղծել է քաղաքավարի կողոպտելու այլ և այլ «փրկարար միջոցներ», ինչպէս՝ օրինակ՝ կաթոլիկութեան ինդուլգենցիան—մեղքերի թողութեան թղթերը, սրբութիւններ շրջեցնելը և այլն. օր.՝ առաջինը—ինդուլգենցիան—ժողովրդին քամելու մի կեղտոտ ծծակ էր, որ և պատճառ եղաւ կրօնական յեղափոխութեան —բողոքականութեան ծագելուն և դրանով էլ առաջ բերաւ տասնեակ տարիներ շարունակ մղվող աշխարհաւեր պատերազմներ:

Ուրեմն խաւարի մէջ պահելով ամբոխին՝ հոգևորականութիւնը կամ հոգևոր կառավարութիւնը հարստահարել է նրա ագիտութիւնը. նրա տանջանքները, նեղութիւնը ու մեղքերը շահագործել, դրանցից ապրուստը ամբարել և լի ու լի վայելել... «Ժողովրդի մեղքն են ուտում», ինչպէս ասում է Աստուածաշունչը:

Ինչպէս նկատեցի, հոգևոր իշխանութիւնը շատ յար և նման է իր իշխանական բնաւորութեամբ մարմնաւոր իշխանութեան. ուստի սրանք բարեկամներ, դաշնակիցներ են ժողովրդին կառավարելու և իրանց հնազանդ պահելու գործում. այդ պատճառով էլ նրանք փոխադարձաբար իրար օգնել են, իրար թև ու թիկունք եղել ժողովրդին նեղելու, հարստահարելու ամեն դէպքում. և յաճախ դրա համար միութիւն են կազմել, որի մէջ գերիշխողը եղել է այս կամ այն կողմը (պետական եկեղեցի և եկեղեցական պետութիւն, օրինակ, Իտալիան):

Այսպէս է եղել և է հոգևորականութիւնը ամեն կրօնի և ամեն ժամանակի:

Սակայն հոգևորականութիւնը պրոգրէսիւ տարր չը լինելով հանդերձ՝ նաև անպաշտօն և ինքնաստեղծ պաշտօնով մի գործօն է, նա լոկ մի պատմական պալար է հասարակութեան՝ իբրև օրգանիզմի բուն մէջ, որ իր կոկծանքներով ու ցաւերով շարունակ խոչընդոտ է լինում առաջադիմութեան աշխատանքի անարգել առաջ տարման:

Վ. Սիրո

Երևան

## ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՍԽԱԲԱԴՈՒՄ

(Նամակ Ասխաբադից, մարտի 1-ին)

Փետրվարի 17-ին, առաւօտեան ժամի 8-ին, տեղս ժամանեց Անդրկասպեան և Թուրքեստանի շրջանի ընդհանուր կառավարչապետ Սուբբոտիչը: Կայարանում նրան դիմաւորեց Ասխաբադի բոլոր հասարակութիւնների ներկայացուցիչները աղ ու հացով: Հայերի կողմից աղ ու հաց մատուցեց բժիշկ Ա. Մնացականեանը և ողջունեց կառավարչապետի գալուստը հետևեալ խօսքերով. «Ձերդ գերազանցութիւն, պատիւ ունեմ ողջունելու ձեր գալուստը հայ հասարակութեան կողմից: Ձեր նշանակվելը ընդհանուր կառավարչապետ՝ հայ հասարակութեանը մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետև նա դեռ կենդանի յիշում է այն հովանաւորութիւնը, որ դուք ցոյց էք տուել անցեալում մեր երկրի կառավարիչ եղած ժամանակ: Ձեր մտածված և անաչառ վերաբերմունքը դէպի մեզ, ձեր ցոյց տուած աջակցութիւնը հայ հասարակութեան լուսաւորութեան և առաջադիմութեան գործում, մեզ ներշնչում է հաստատ համոզմունք, որ դուք հիմա էլ կը տաք հայերին հնարաւորութիւն լայն և ազատ զարգացնել իրանց մտաւոր ոյժերը երկրի օգտին»:

Նորին գերազանցութիւնը պատասխանեց. «Շնորհակալ եմ աղ ու հացի համար և ես ձեզնով սեղմում եմ հայերի ձեռքը: Հայերը միշտ եղել են կուլտուրական և ես միշտ վերաբերվել եմ դէպի նրանց առանձին համակրանքով, գնահատելով նրանց մէջ նախանձելի ձգտումը դէպի լուսաւորութիւնը և դէպի զարգացումն իրանց կուլտուրական պահանջների: Ես հաւատացած եմ, որ հայերը հաշտութեան և խաղաղութեան մէջ կաշխատեն զարգացնել իրանց ընդունակութիւնները երկրի օգտին և այդ դէպքում իմ կողմից ամեն ժամանակ կը գտնեն համակրանք և օգնութիւն: Կրկին անգամ շնորհակալութիւնս եմ յայտնում պարոններին»:

Մի քանի տեղ այցելելուց յետոյ Սուբբոտիչի կինը այցելեց հայոց մանկական պարտէզը, որը բացվել է նրա օրով: Նրա ներկայութեամբ երեխաները երգեցին երգեր ռուսերէն, իսկ վարժուհի Մամիկոնեանը մի քանի խօսքով բացատրեց պարտէզի առաջադիմութիւնը և լայն ծաւալ ստանալը: Դուրս գալուց տիկին Սուբբոտիչը խոստացաւ լինել պատուաւոր անդամուհի և տեսչուհի:

Կառավարչապետը միայն 4 ժամ մնաց, ապա մեկնեց այստեղից: Նրա ճանապարհորդութեան նպատակն է ծանօթանալ զօրքի ոգու հետ և միջոցներ ձեռք առնել բարձր պահելու զինուորական տրամադրութիւնն իրան յանձնված շրջանում:

Գեներալ Սուբբոտիչը լաւ ծանօթ է հայերիս որպէս արդարադատ, բարեխիղճ և դէպի առաջ ձգտող մարդ և յոյս ունենք այդպէս էլ կը մնայ, որովհետև նա մի քանի անգամ ժողովուրդի հետ խօսելուց, շեշտել է՝ որ նա պէտք է առաջնորդվի հոկտեմբերի 17-ին տուած մանիֆեստով և պէտք է ձգտէ նպաստելու ժողովուրդի կուլտուրապէս զարգանալուն:

Տ. Մելիք-Յիւսէֆեանց

## ՄԻ ՏԳԵՂ ԵՐԵՒՈՅԹ

(Նամակ Կարսից)

Ինչպէս յիշեցի, իմ անցեալ թղթակցութեան մէջ մեր ուսուցիչները տեղիս սիրողներից մի քանիսի մասնակցութեամբ տուին երկու հանրամատչելի ներկայացում, որոնցից (ներկայացումներից ընդհանրապէս) գոյացած արդիւնքը պէտք է գործադրվէր դէկորացիաներ ձեռք բերելու և բեմական յարմարութիւններ ստեղծելու համար. նոյն իսկ խօսք կար ուսումնարանի օգտին յատկացնել: Բայց յանկարծ մի ինչ որ թիւր պատճառաբանութեամբ՝ վերցնում և որոշում են բաժանել արդիւնքը իրար մէջ: Նրանց պատճառաբանութիւնը կայանում է նրանում, որ իբր թէ ժողովուրդը ձրիակերութեան (!) կը վարժվի, եթէ այդ փողերը յատկացվեն մի որ և է նպատակի (բացի գրպանից): Ի՞նչ ձրիակերութեան մասին է խօսքը, մենք չենք հասկանում, և միթէ ձրիակերութիւն կը լինի, եթէ դուք՝ ձեր բարոյական սրբազան պարտականութիւնը կատարելով՝ հաւաքած փողը (120 ր.) ուղարկէք հայ-թուրքական վնասվածներին օգնելու համար հիմնված «Յանձնաժողովին», կամ համաձայն ձեր խոստման՝ այդ գումարով բեմական յարմարութիւններ ստեղծէք:

Որովհետև Կարսում սիրողները իրանց ներկայացումներով միշտ նպաստել են մի որ և է բարեգործական ձեռնարկութեան, (բայց ոչ գրպանի բարեգործութեան) ուստի և՝ եթէ սիրողները ցանկանում էին վերջին տեսակի բարեգործութիւն կատարել՝ պէտք է անպայման յիշատակէին աֆիշաների մէջ «յօգուտ սիրողների» բառերը:

Ուսուցիչ-սիրողների այս վարմունքը վարկաբեկ է անում ամբողջ ուսուցչական կազմը, որովհետև հասարակութիւնը անխտիր կերպով վերագրում է այս բոլորը «վարժապետներին»:

Ի վերջոյ պարտք եմ համարում յայտնել, որ գումարի նպատակայարմար գործադրութեան ձեր որոշման համար գումարված ժողովում սիրողներից չորսը մերժել են ընդունել յօգուտ գրպանի և մտադրութիւն ունեն հայ-թուրքական կոտորածներից վնասվածների ընտանիքների ամոքմանը նպաստել իրանց չնչին լումայով:

Ժողովին բացակայել են տեղիս սիրողները, և մենք լիայոյս ենք, որ նրանք կապացուցեն «վարժապետներին» իրանց մեծ սխալը:

Բ. Թոր—եան

## ՆՊԱՍՏՆԵՐԸ ՊԻՏԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼ

Իւրաքանչիւր գործ, որ չէ դրված որոշ կազմակերպված օրէնքների վրա, որի մէջ տեղ են գտնում պատահականութիւնները, անշուշտ անբաւարար կը լինի, որքան էլ համակրելի ու նուիրական լինեն նրա շարժառիթները:

Այդպիսի պատկեր է ներկայացնում մեզնում թուրք-հայկական ահաւոր ճիւաղի զոհերին օգնելու գործը: Յայտնի է, որ երբ այդ հրէշն իր գլուխը բարձրացրեց Բագւում, Թիֆլիսում անմիջապէս մի նպաստամատոյց մարմին կազմվեց, որ պիտի թեթևացնէր ու ամոքեր թշուառների ցաւը, պիտի ղեկավարէր հասարակական նուէրները: Այդ մարմինը նախ քան օգնութեան գործին անցնելը, պէտք է աշխատէր ձեռնհաս մարմինների կամ մարդկանց միջոցով ուսումնասիրել կարիքն իր միջավայրում, նրա չափը, տեսակները, օգնելու միջոցները, թէկուզ այդ աշխատանքը որոշ նիւթական զոհողութիւններ էլ պահանջէր:

Որքան գիտեմ, լուրջ, սիստեմատիկ ուսումնասիրութեան փորձ տեղի ունեցաւ միայն Հին-Նախիջևանի գաւառում տեղական յանձնաժողովի և Ա. Սահակեանի ձեռքով: Ճշմարիտ է՝ առաջ եկան կանանց մէջ արհեստներ տարածելու, բժշկական օգնութիւն կազմակերպելու, երկրագործական գործիքներով օգնելու խնդիրներ, սակայն այդ բոլորն այնքան պատահական ու մասնաւոր բնաւորութիւն էին կրում, որ ընդհանրանալ և էական օգուտ տալ չը կարողացաւ, եթէ հաշւի չառնենք Նախիջևանը:

Մեր հասարակութիւնն էլ իր հերթին դեռ շատ տեղ շարունակում է իր նուէրները կապված պահել անձնական ծանօթութիւնների, երկրացութեան, ու բարձրացրած աղմուկի հետ: Գանձակեցին աշխատում է ձեռքն ընկածը Գանձակ հասցնել, շուշեցին Ղարաբաղ, Կազախին օգնողներ ունեցաւ, որովհետև նրա մասին շատ գրվեց, իսկ խեղճ ու կրակ Թէզխաբարցիք ու արփագիառեւցիք՝ չը գիտեն ում հասցնեն իրանց ցաւը: Չէ՞ որ այդպիսի գիւղերը բազմաթիւ են. չէ՞ որ նրանք էլ են անճար, ձեռքը ծոցում մնացել. չէ՞ որ մահաշունչ սովը նրանց դուռն էլ է թակում:

Ես ոչ որի մեղադրելու յաւակնութիւն ու ցանկութիւն չունեմ, այլ միայն ուզում եմ ուշադրութիւն հրաւիրել գործի պակասաւոր կողմի վրա: Այդ [illegible] վրա պիտի ուշադրութիւն դարձնել մանաւանդ այժմ, երբ դեռ աղէտի ահաւորութիւնը չէ թուլացել և Վեհափառ Կաթողիկոսը նորից ու նորից է կոչ անում օգնութեան հասնելու, հետևաբար նոր ու նոր գումարներ պէտք է ժողովվեն:

Իմ կարծիքով, բոլոր միջոցները պէտք է կենտրոնացնել նպաստամատոյց մարմնի ձեռքում. նա պէտք է մի օրգանական ամբողջութիւն կազմէ, որ պէտք է ամբողջ գործը շարժէ: Դրա համար նա պէտք է լաւ կազմակերպվի: Նա պէտք է ամեն տեղ ունենայ իր մասնաճիւղերը, որոնց միջոցով պէտք է ուսումնասիրէ, իր համար շօշափելի դարձնէ կարիքն իր բոլոր կողմերով և այնուհետև պէտք է ղեկավարէ նպաստների բաշխումը: Միաժամանակ նա պէտք է աշխատէ, որ օգնութիւնը հնար եղածին չափ դրամով չը տրվէ, այլ լծկանով, երկրագործական գործիքներով, բժշկական օգնութիւնով, արհեստներով և այլն:

Այս ամենը լայն չափով կիրականանայ, եթէ կենտրոնացնենք ու կազմակերպենք:

Ց. ք. Սաւրիկեան

## Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Մենք, ստորև ստորագրողներս, արտայայտում ենք մեր զարմանքը և զայրոյթը «Тифлисскій Листокъ»-ի խմբագրութեանը, որ թոյլ է տուել իրան խախտել լրագրական էտիկան իր հետևեալ վարմունքով.

Չը նայելով, որ Թիֆլիսի բոլոր թերթերի ներկայացուցիչները, որոնք ներկայ էին հայ-թուրքական համագումարի նիստերին, ի թիւս որոնց և «Тифл. Лист.»-ի, համաձայնութիւն կայացրին մարտի 6-ի համագումարի մասին հաշւետուութիւնը հանգամանօրէն և ճիշտ կազմելու նպատակով մարտի 7-ի համարում չը տպագրել, այլ 8-ի համարում: Հակառակ իր տուած խոստմանը՝ «Тифл. Лист.»-ի խմբագրութիւնը թոյլ է տուել իրան հրատարակելու մարտի 7-ի համարում առանձին յաւելված դրա մասին, մարտի 6-ի տեղեկագրի հետ միասին, այնպէս որ միմիայն «Тифл. Лист.»-ը միայն նիստի մասին տեղեկութիւն տուեց:

Մի այդպիսի խոստմնազանցութիւն և ընկերական էտիկայի խախտումն էլ թոյլ տուեց անձամբ «Тифл. Лист.»-ի խմբագիր պ. Զաքարը համագումարի առաջին նիստի հաշւետուութեան մէջ, որի մասին ժամանակին նրան նկատողութիւն արեցին մեզանից մի քանիսները, բայց ըստ երևոյթին չէ իմաստացրել պ. Զաքարին, և նա շարունակում է համարել իրան ազատ իր տուած խոստումից: Պ. Զաքարի վարմունքի մասին մենք պարտք ենք համարում յայտնել ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, որպէս զի նա իմանայ թէ ինչ պատճառով մարտի 6-ի նիստի հաշիւը լոյս չէր տեսել միւս թերթերում, մարտի 7-ի համարի մէջ:

Խմբագրութիւններ՝ «Նով. Օբոզրենիէ», «Սովրեմեննիկ», «Յառաջ», «Արշալոյս», «Մշակ»:

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 մարտի

Սկսելով Թիֆլիսի կոնսիստորիայի ծառայողների վերաբերեալ գործի քննութիւնը ս. Սինոդի հրամանի համաձայն, յարգոյաբար խնդրում եմ այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք որ և է կերպով տուժել են յիշեալ պաշտօնեաների անկանոն գործունէութեան կամ այլ հանգամանքի շնորհիւ՝ դիմել ինձ գրաւոր կամ բանաւոր՝ առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը, Օրբէլեան փողոց № 28 կամ առաջնորդարան:

Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեան

Խնդրում եմ միւս խմբագրութիւններից արտատպել սոյն դիմումս:

Շուշի, փետրվարի 18-ին

Մօտաւորապէս մի ամիս սրանից առաջ տեղիս մի քանի օրիորդներ թոյլ էին տուել իրանց փող ժողովել անորից և ժողոված փողերը իւրացրել են. հէնց այդժամանակները լուր է տարածվում, որ իբր թէ ես էլ մասնակից եմ եղել այդ գործին: Լուրը շատ հեշտութեամբ տարածվում է, որովհետև օրիորդներից մէկը կրում էր իմ ազգանունը: Այնուհետև շուտով գործը քննվում է և պարզվում թէ ով է մասնակցել այդ գործին: Եւ այսպիսով իմ մասին տարածված լուրերը քաղաքումս ինքնին հերքվում են: Բայց որքան մեծ եղաւ իմ զարմանքը, երբ միւս քաղաքներից ընկերուհիներս դիմեցին ինձ հարցնելով, արդեօք ճիշտ է, որ ես մասնակցել եմ այդ գործում: Սրանով յայտնում եմ ի գիտութիւն Շուշու հասարակութեան, իմ բոլոր ծանօթներին, որոնք գտնվում են Շուշուց դուրս, որ ես այդ կեղտոտ և զզուելի գործում ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել և իմ մասին տարածած լուրերը մտածածին են և զրպարտութիւն:

Օր. Հերսիլեա Սարգսեան Ղազարբէկեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքին գործերի մինիստրութիւնը նահանգապետներից շատերից զեկուցումն է ստացել պօստ-հեռագրական պաշտօնեաների մէջ նոր յուզումներ առաջանալու մասին. ուստի ներքին գործերի մինիստրը հրաման է արձակել նահանգապետներին ամենալուրջ հսկողութիւն նշանակել պօստ-հեռագրատան պաշտօնեաների վրա և ամենափոքրիկ անկարգութեան դէպքում իսկոյն տեղեկացնել իրան հարկաւոր կարգադրութիւններ անելու համար: «Р. В.»

Վերջին աղէտեալների օգտին ստացանք՝ 1) Բիլին քաղաքից մէկ անյայտ անձից 1 ր. 2) Բինդերգեաղից—տեղական հայ գաղութից ժողոված պ. Խուսէնքեանի միջոցով 50 ր., 3) Պրոխլադնայա ստանիցայից—Մէգնիկեանի միջոցով ժողոված 48 ր. 80 կ., 4) Բալախանիից—«Սուրչանանց» ֆիրմայի ծառայողներից Օգուուլեանցի միջոցով 90 ր., 5) Բագուից—Ա. Ա.-ի հարսանիքի հանդէսում Մէլիք-Քարամեանի միջոցով ժողոված 11 ր., 6) Թոսի (Էջմիածնի գաւառ) երկդասեան ուսումնարանի աշակերտներից 10 ր., 7) Ռոստովից (Դոնի վրա) Ալէքսան Մինասեանցի հարսանիքում ժողոված Թիւթիւնջեանի միջոցով 22

---

Մի ժամ անցաւ ինձ համար, ինչպէս մի վայրկեան: Իմ շփոթմունքս անհետ չքացել էր. ես զգում էի, որ գտնվում եմ իմ հարազատների շրջանում:

Բարձրաձայն ծիծաղի ժամանակ տեսուչը յանկարծ նայեց ժամացոյցին և բացականչեց.

—Է՜, խօսք ու զրոյցը լաւ բան է, բայց չը պէտք է մոռանալ և դասերը: Ապա, պարոն նորընծայ, սկսեցէք ձեր «դեբիւտը» տեսնենք:

Եւ նա վերցրեց մի փոքրիկ զանգակ ու տալով ինձ՝ խնդրեց դուրս գալ դպրոցի գաւիթն ու հինգ րոպէից յետոյ զանգահարել:

Ինձ սաստիկ դուր եկաւ այդ լայն, ընդարձակ գաւիթը. դարաւոր չինարների բարձր, սաղարթախիտ գլուխները տարածել էին նրա վրա իրանց լայն, զով ստուերը, որի մէջ խաղում ու վազվզում էին երեխաների բազմաթիւ, խայտաճամուկ խմբեր. նրանց աղմուկ-աղաղակին միացնում էր և իր հաճելի քչքչոցը մի պարզ, ականակիտ առու, որ հոսում էր գաւիթի միջով և լւանում ծերուկ չինարների՝ գետնի երեսին փռված՝ հաստ արմատները:

Հինգ րոպէն անցել էր:

—Ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ... ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ...

Մանկական անոյշ թոթովանքի նման հընչում էր իմ ձեռքում զանգակի բարակ ձայնը. աշակերտները, յանկարծակի թողած իրանց խաղ ու զուարճութիւնները, ուրախ-ուրախ ոստոստելով վազում էին դասարան: Գաւիթի հեռու անկիւնում մնացին միայն մի քանի փոքրիկներ, որոնք տաքացած շարունակում էին խաղը. անշուշտ նրանք չէին լսել զանգակի ձայնը: Կարելի էր նրանց կանչել կամ մօտենալ ու ասել, որ զանգը տուած է, բայց ես ինքս էլ... մի երեխայ էի. ինձ անչափ դուր եկաւ փոքրիկ զանգակի ձայնը և ես սկսեցի նորից զանգահարել,—

—Ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ... ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ...

Քաղցր, դուրեկան ձայն. քիչ էր մնում, որ ես էլ, մոռանալով վերակացուի պաշտօնը, խառնվէի աշակերտներին և վեր-վեր թռչելով վազէի նրանց հետ դասարան:

Այդ վաղուց էր շատ...

Ես մեծացայ դպրոցում, աշակերտների հետ, սիրեցի ամենքին,—և դպրոցն, իբրև իմ հայրենի տունը, և երեխաներին, իբրև իմ որդոցն ու եղբայրներին: Իմ երեսիս վրա բուսան և մաղ և մօրուք, ես դարձայ ուսուցիչ, դարձայ և տեսուչ, բայց փոքրիկ զանգակի անոյշ «ծընկծընկոցը» երբեք չը կորցրեց ինձ համար իր հրապոյրը: Երբ ուսուցիչներից մէկը կամ միւսը յարձակումներ էր գործում նրա վրա և գանգատվում, որ նրա ձայնը չէ լըսվում դասարաններում, ես ամենայն եռանդով պաշտպանում էի փոքրիկ զանգակի արժանաւորութիւնները և չէի թոյլ տալիս փոխելու նրան: Վերջին օրերը միայն՝ հարկադրված ընկեր-ուսուցիչների թախանձանքից՝ ես դաւաճանեցի, վերջապէս, փոքրիկ արծաթաձայնչին զանգակին և նրա փոխանակ պատուիրեցի գնել մի մեծ զանգ: Արդեօք փոքրիկ զանգակն էր տանում իր հետ դպրոցի բաղդը...

### III.

—Դը՛նկ, դը՛նկ, դը՛նկ... Դը՛նկ, դը՛նկ, դը՛նկ...

Նոր զանգը տխուր ղօղանջիւնով երգում էր իր անհաճոյ երգը. նախասենեակի կամարները հառաչում էին երերուն արձագանքով. իմ և իմ ընկերների սրտից արիւն էր կաթում...

Սկսվեց երրորդ դասը... վերջին դասը...

Լուռ, առանց մի ձայն հանելու, առանց իրար երես նայելու՝ ուսուցիչները վերցրին սեղանի վրայից աշակերտական մատեանները և ցրուեցին դասարանները: Ես, շփոթված, մատեանի փոխարէն գլխարկս դրի կռնատակս ու մտայ Ա. բաժանմունքը: Աշակերտները վեր կացան տեղերից և ըստ սովորականին ուրախ-ուրախ ողջունեցին ինձ:

Սիրելի՜ փոքրիկներ,—նրանք ոչինչ չը գիտէին, նրանք անհոգ, ծիծաղադէմ ժպտում էին, ինչպէս միշտ...

Ամենքը նորից նստեցին տեղերը, կանգնած մնաց միայն փոքրիկ Ռուբէնը. նա նստում էր առաջին շարքի նստարաններից մէկի ծայրին, ուսուցչական սեղանի մօտ:

Ռուբէնը անտեղի հարցեր տուողներից չէր. նա անշուշտ մի կարևոր բան ունէր ասելու: Նայել նրա մանկական պարզ, մաքուր, քաղցրահայեաց աչքերին, նրա սիրելի, անոյշ դէմքին ու չը մոռանալ աշխարհի բոլոր ցաւերը՝ անկարելի էր: Իմ սիրտս փոքր ինչ թեթևացաւ. ես, կարծես, սթափվեցի մի տանջող երազից:

—Հը՛, ինչ ունես ասելու, Ռուբէն,—հարցրի ես փոքրիկ «ճուտիկին», որ ձեռքը բարձրացրած՝ անխօս կանգնած էր իմ առաջ:

—Հրամայեցէք դուրս տանել նոր զանգը, պարոն տեսուչ...

—Ինչու, դուր չեկաւ քեզ:

—Ո՛չ, դուր չեկաւ, լաւը չէ, մեր փոքրիկ զանգակը աւելի լաւն էր:

Ռուբէնի աչքերը յանկարծ լցվեցին արտասուքով:

—Ես մեր հին զանգակն եմ ուզում... Նորը լաւ զանգ չէ... տարէք դուրս տանեն,—արտասուքը կուլ տալով անընդհատ կրկնում էր Ռուբէնը:

Ես երկու ձեռքով բռնեցի Ռուբէնի գլուխը և սեղմեցի կրծքիս. նա իր փոքրիկ թևերը փաթթեց իմ մէջքին:

—Կասեմ, հա՛, կասեմ, որ դուրս տանեն նոր զանգակը,—գլուխը վեր բարձրացնելով ու արտասուքի միջից ժպտալով հարցնում էր Ռուբէնը:

—Կասեմ, սիրելիս, կասեմ, լաց մի լինի,—հանգստացնում էի ես նրան:

Փոքրիկ «ճուտիկը» չը գիտէր, որ այնուհետև էլ լսելու չէր ոչ նոր և ոչ հին զանգակի ձայնը. չը գիտէր, ի հարկէ, նոյնպէս, որ այդ օրից սկսած կրկին վերադառնալու է դէպի փողոցի անտէրութիւնը, դէպի քաղցի ու մերկութիւնը, դէպի հեռաւոր ազգականների ծեծն ու քաշը, որոնցից հազիւ մի քանի ամիս առաջ ազատվել էր...

Ա՜խ, խեղճ «ճուտիկ», խե՜ղճ երեխաներ. նրանք բոլորը յիսուն հոգի էին այդ դասարանում. ամենքն էլ քաղաքի չքաւոր, աղքատ ծնողների զաւակներ—կիսամերկ, կիսաբոբիկ, կէս-կուշտ, կէս-քաղցած, ծարաւի ուսման ու փայփայանքի. նրանց միակ ուրախութիւնը դպրոցն էր, ուր մի բուռն ուսուցիչներ՝ իրանց աշակերտների նման կէս-կուշտ, կէս-քաղցած, զուրկ աշխարհային ամեն վայելքներից՝ հոգեկան վայելք էին որոնում նրանց ուրախութեան, նրանց ներկայի ու ապագայի մէջ...

Ես մի ակնարկ գցեցի դասարանին ու չը ճանաչեցի նրան. իմ միշտ ուրախ դասարանը տխրել էր ու լռել. ամենաթեթև շշուկ անգամ չէր լսվում այնտեղ. լուրջ, ակնապիշ՝ ամենքն էլ ինձ էին նայում,—փոքրիկ հոգեբանները, երևի, մի տարօրինակ բան էին նկատել իմ դէմքին:

Բայց պէտք էր սկսել դասը և մի բանով պարապել, մի կերպ մոռանալ, որ հասել էր վերջին ժամը, երբ ես, գուցէ, ընդմիշտ զրկվելու էի այդ մանկական անմեղ երեսներին, այդ փայլուն սիրունիկ աչքերին նայելուց, որոնք այնպիսի վստահութեամբ, այնպիսի սիրով ինձ էին ուղղված: Արդէն իմ մարմինս, ինչպէս բևեռային ցրտից բռնված, սկսել էր դողդողալ. ատամներս երբեմնապէս յանկարծական հարուածով զիպչում էին իրար, կոկորդիս մէջ մի ինչ որ բան բարձրանում էր ու իջնում, աչքերս մթնում էին: Մի րոպէ ևս—և ես գուցէ կը սկսէի հեկեկալ, ինչպէս ամենափոքրիկը իմ աշակերտներից, անզուսպ, բարձրաձայն... Բայց ես գերմարդկային ոյժ գործ դրի և դողդոջուն ձեռքով վերցրի դասագիրքը սեղանի վրայից: Այդ ժամանակ միայն իմ միտքս ընկաւ, որ ես ոչ մի հատուած չէի պատրաստել տանը այդ օրվայ դասի համար: Մեքենայաբար բաց արի դասագիրքը ու կանգ առայ մի պատահական հատուածի վրա. նա կրում էր «Մայրենի լեզու» վերնագիրը:

—Այսօր, երեխայք, մենք պէտք է խօսենք մայրենի լեզուի մասին: Կրկնեցէք, ինչի մասին մենք պէտք է խօսենք այսօր:

Ես ձեռքով նշան տուի:

—Այսօր մենք պէտք է խօսենք մայրենի լեզուի մասին,—կրկնեց երեխաների քաղցրաձայն խումբը:

—Ինչ է նշանակում «մայրենի լեզու»,—հարցրի ես, առանց լաւ ըմբռնելու թէ ինչ եմ անում:

Մի քանի վեհերոտ ձեռքեր վեր բարձրացան այս ու այն կողմից. դա նշան էր, որ ես հարցը սխալ էի առաջարկել. պէտք էր նրան ձևափոխել... Բայց այդ ժամանակ նախասենեակում լսվեցին մի քանի հոգու կոպիտ ոտնաձայներ: Ես լարեցի լսողութիւնս. —Նրանք են,—դուրս թռաւ իմ բերանից,— հասաւ սոսկալի րոպէն...

Ես դուրս եկայ և մի քանի րոպէից յետոյ նորից մտայ դասարան: Երևի, զարհուրելի տեսք ունէի ես. աշակերտներից շատերը վեր թռան տեղերից և ապշած-վախեցած աչքերով նայում էին ինձ:

—Սիրելի երեխաներ, մայրենի լեզուն... հայոց լեզուն... սիրեցէք նրան... չը մոռանաք նրան...

Ձայնս դողդողալով ես ինչ-որ անկապ, կցկտուր բառեր էի ասում ու այն էլ վերջացնել չը կարողացայ: Աշակերտ, դասարան, նստարաններ խառնվեցին իրար իմ աչքում ու սկսեցին պտոյտ գալ շուրջս. ես հազիւ կարողացայ յենվել ուսուցչական սեղանին, որի մօտ կանգնած էի...

Թէ ինչ պատահեց այնուհետև—չը գիտեմ. յիշում եմ միայն, որ ես լսում էի խառնաշփոթ աղմուկ—աղաղակ, լաց—որոտում և այդ ամենքի հետ և ամենից բարձր ու որոշ կերպով նոր զանգի տխուր ղօղանջիւնը:

—Դը՛նկ, դը՛նկ, դը՛նկ... Դը՛նկ, դը՛նկ, դը՛նկ...

Սգահանդէսը վերջացել էր, մի մեծ հողաբլուր թաղել էր մեր դպրոցը, թաղել էր ամենքին...

Իբրև ողորմութիւն, ես խնդրեցի հոգաբարձութիւնից, որ փոքրիկ զանգակը ինձ ընծայեն: Եւ այժմ, երբ իմ դպրոցի հետքն անգամ չը կայ,—նա վաղուց քանդված ու հաւասարեցրած է հողին,—ես շատ անգամ՝ խորասուզված անցեալի յիշողութիւնների մէջ երկար-երկար նայում եմ այդ փոքրիկ, սևացած զանգակին, որ անփոփոխ բազմած է գրասեղանիս վրա, թանաքամանի կողքին: Եւ երբ մեծ է ցաւն իմ սրտի խորքում ու ակամայ հառաչանքն ուզում է դուրս քաշել հոգիս, ես ամուր-ամուր փակում եմ սենեակիս դռներն ու վերցնում տեղից զանգակը:

Որպէս մի ժամանակ դպրոցի գաւիթում, ես պտոյտ եմ գալիս սենեակի մէջ և ուժգին թափահարում զանգակը.

—Ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ... ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ...

հնչում է նորից նրա արծաթահնչիւն ուրախ ձայնը սենեակիս լռութեան ու միայնութեան մէջ, և թւում է ինձ, թէ իմ շուրջս կենդանանում են անցեալի ուրուականները... Ականջներս սկսում են խշշալ, սիրտս բաբախում է արագութեամբ, աչքերս որոնում են ծանօթ պատկերներ...

—Ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ... ծը՛նկ, ծը՛նկ, ծը՛նկ...

Եւ թւում է ինձ, թէ ես լսում եմ նորից մանկական անոյշ, ուրախ աղաղակ, թւում է, թէ ես գրկում եմ փոքրիկ Ռուբէնին ու անհուն կարօտով սեղմում իմ սրտին...

Խեղճ, փոքրիկ Ռուբէն, խե՜ղճ, փոքրիկ զանգակ...

Ա. Մխիթարեան

1904 թ.

ր. 10 կ., 8) Նոր-Մարգևլանից—տեղական հայ համարակութեան կողմից նոյեմբեր, դեկտեմբեր և յունվար ամիսների պարտադիր ամսատուրք գանձապահ Աբովեանի միջոցով 75 ր. 25 կ., 9) Աստրախանից—Մարգար Ցովհաննիսեանից կատարինէ Պապովեանցի յուղարկաւորութեան առթիւ, Արիստակէս արքեպիսկոպոսի միջոցով 100 ր., 10) Տիկ. Նունէ Իպիթխանեանից (Թմանակը) 10 ր., 11) Մի տաճկաստանցուց 10 րուբլի:

Հայ տիկինների մի խումբ նահանգապետից թոյլտուութիւն է ստացել Գանձակի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ վնասուած հայերի օգտին հոյլական մի ներկայացում տալու:

Ինչպէս լսում ենք գնդապետ Նէյգեբաուէրի կարգադրութեամբ Կարսի բերդից ազատվել են 40 քաղաքական կալանաւորներ:

Երկրագործութեան նախկին մինիստր Ն. Ն. Կուտլերը սահմանադրական-ռամկավար կուսակցութեան անդամ է գրվել: «Рѣчь» թերթը, որ կուսակցութեան օրգանն է, բաց է արել իր էջերը նրա յօդուածների համար:

Ստացանք «Արամի Պսակը», պատմուածք Շահրիարի, հրատարակութիւն Վարդանի: Այս պատմուածքը, որ մի պատկեր է հայ-թուրքական ընդհարումներից, արտատպված է «Մշակից»: Գինն է 6 կոպէկ:

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Ա. Բ. Եւանգուլեանը, որ գտնվում է բանտում, քաղաքային վարչութեանը մի յայտարարութիւն է ուղարկել, որով շեշտում է, որ Պետական Դումայի համար կանոնաւոր ընտրութիւններ կատարելու համար անհրաժեշտ է վերացնել Թիֆլիսում զինուորական դրութիւնը և մամուլի ու ժողովների ազատութիւն տալ:

Թիֆլիսի պօստ-հեռագրատան խնայողական գանձարանը փետրվար ամսվայ ընթացքում մտել է 114,419 րուբլի 75 կ., բաց է թողնված 14,633 ր. 91 կ.: Անցեալ տարի մի և նոյն ամսում մտել էր 56,782 ր. 75 կոպէկ:

Լ. Ֆ. Տիգրանեան խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին թոյլատրել իրան հրատարակելու Թիֆլիսում իր խմբագրութեամբ ռուսերէն լեզվով ամենօրեայ մի թերթ «На Жизнь» անունով:

Ռուսերէն նոր ամենօրեայ թերթերի հրատարակութեան իրաւունք ստանալու համար խնդրամատոյց են եղել Փոխարքային՝ «Возрожденіе» թերթի նախկին խմբագիր պ. Գոտուան՝ «Вѣстникъ Возрожденія» անունով, իսկ Ալ. Մդիվանին՝ «На Поворотѣ» անունով:

Բագուի քաղաքային 2-րդ ռուս-թուրքական ուսումնարանի ուսուցիչ Մամեդ Էֆենդիեւ, և թուրքերէն լեզուի ուսուցիչ Ալի Ջաֆարովը խնդրամատոյց են եղել Բագուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետին թոյլատրել իրանց հրատարակելու Բագու քաղաքում թուրքերէն լեզվով մանկական պատկերազարդ երկշաբաթաթերթ «Դաբիստան» անունով (դպրոց) և նրան իբրև յաւելուած մի ամսաթերթիկ ծնողների համար՝ «Վալիդէյնա-մախսուս-վէրեգէ» (թերթիկ ծնողների համար): Թերթի գինը իր յաւելուածով նշանակված է 4 րուբլի:

«Հէյաթ» թերթի աշխատակից Մէյթի-բէգ Հաջինսկին խնդրամատոյց է եղել Փոխարքային թոյլատրել իրան հրատարակել Դերբենդ քաղաքում թուրքերէն և ռուսերէն լեզուներով (զուգընթաց տեքստով) մի թերթ «Дербендъ» անունով: Թերթի նպատակն է ծառայել Դաղստանի վիճակի մուսուլման ազգաբնակութեան շահերին: Խմբագիրները լինելու են Մէյթի-բէգ Հաջինսկին և Ռահիմ-բէկ Մելիքով:

Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին առայժմ չը կատարել 1905 թւի դեկտեմբերի 11-ին քաղաքային Դումայի կայացրած վճիռը՝ վերջին անկարգութիւններից վնասվածներին նիւթական օգնութիւն տալու նպատակով 5000 րուբլի յատկացնելու համար և մի շաբաթ ժամանակամիջոցում հաղորդել, թէ ինչ անկարգութիւնների մասին է խօսքը, և վերոյիշեալ 5000 րուբլին ում պէտք է բաժանել:

Մարտի 5-ին, կիրակի օրը լոյս տեսաւ «Յոյս» հայերէն շաբաթաթերթի առաջին համար:

Ինչպէս հաղորդում է «Баку» թերթը, նաւթարդիւնաբերական ժողովի խորհրդի Սաբունչու դպրոցին կից բանուորների համար բացված երեկոյեան կուրսերը, տեղական ադմինիստրացիայի կարգադրութեամբ, մարտի 1-ից փակվել է:

Երկուշաբթի, մարտի 6-ին, առաւօտեան 8 ժամից սկսած քաղաքիս 9-րդ մասում, Նազարովսկի և կից փողոցների տներում, մի օֆիցեր 8 զինուորի հետ խուզարկութիւններ կատարեց տներում: Տան տէրերից ոմանք ծառայութեան մարդիկ լինելով—բացակայ էին. իրանց հետ ուղեկալով մի քանի արկղների բանալիները խուզարկողները՝ փակած արկղները կոտրատելով և փշրելով՝ շարունակել են իրանց խուզարկութիւնը, սակայն ոչինչ չեն գտել:

Մոսկվայում մօտ ժամանակներս, ինչպէս իմանում ենք «Русск. Вѣд.» թերթից, սահմանադրական-ռամկավար կուսակցութեան Տվերսկի շրջանային խմբի ժողովում ճառախօսներից մէկը, պ. Եվգենիեվ, հետևեալ ուշագրաւ միտքն է յայտնել. «Մինչև թաթարների տիրապետութիւնը «ռուս ժողովրդի մէջ» միապետական զգացմունքներ չը կային և որ ժողովրդական ինքնավարութեան միապետական փոխվելու համար մենք պարտական ենք բացառապէս թաթարներին»:

Սահմանադրական-ռամկավար կուսակցութիւնը եկող կիրակի մարտի 12-ին մտադիր է դասախօսութիւն նշանակել «Արտիստիկական ընկերութեան» դահլիճում: Բիւրոյի անդամ Գ. Ջ. Գվազավան կարդալու է «Автономія и единство Россіи»: Իսկ Պ. Մ. Կարա-Մուրզայի դասախօսութիւնը «Բանւորական օրէնսդրութեան մասին» երևի կը լինի մարտի 19-ին. արդէն դրանց մասին դիմել են ժամանակաւոր գեներալ-նահանգապետին թոյլտուութիւն ստանալու համար:

Այսօր մարտի 8-ին Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկում դրաւ դրված 377 կալուածքների համար աճուրդավաճառ է նշանակված:

Նուխուց գրում են «Հէյաթ» թերթին, որ Նուխու Ջումա-մէչէթին կից գտնվող մուսուլմանական դպրոցը, որի գործերը վերջին ժամանակներս բաւական քայքայվել էին, արդէն վերանորոգվել և իր նախկին բարեկարգ վիճակն է ստացել: Ներկայումս դպրոցում սովորում են 120 աշակերտներ: Դասաւանդութիւնը կատարվում է նոր մեթօդով:

Բաթումից «Нов. Об.» թերթին գրում են, որ մօտ ժամանակներումս այնտեղի ժամանակաւոր գեներալ նահանգապետը իր մօտ է պահանջել քաղաքագլուխ Ն. Ջ. Անդրոնիկովին, վարչութեան անդամներ՝ Փուրուլին ու Վոյլսկուն և քարտուղար Մեսխիին: Այնպէս որ ամբողջ վարչութիւնը հաւաքվել էր գեներալ-նահանգապետի ընդունարանում, որը նրանց մօտ դուրս գալով, մռայլ բարևել անգամ, և դիմեց նրանց հետևեալ ճառով. «Մենք թաղեցինք գորոդովոյին, որը սպանվել է, իր ծառայութեան ժամանակ, պօստը կողոպտելիս. եթէ թաղում էին մի որ և է Կլիւշնիկի, դուք նրան ուղեկցում էիք մեծ պատւով, իսկ մինչդեռ, ձեզանից ոչ մէկը չէր ուղեկցում գորոդովոյի դագաղին»: Իշխան Անդրոնիկովը ուզում էր ինչ որ պատասխանել, բայց գեներալ-նահանգապետը երեսը դարձրեց ու հեռացաւ:

Լէնքօրանի գաւառապետ Պաշկովսկին, ինչպէս լուր է տարածվում, ուրիշ նահանգ են տեղափոխում (Ցնոր. Փուրջէլ):

Թիֆլիսի նահանգապետը բացատրել է, որ շրջանային գիւղական ժողովների կայացրած վճիռները լիազօրների ընտրութեան մասին չեն կարող քննել ոչ գաւառապետները, ոչ էլ հաշտարար միջնորդները. բայց եթէ յիշեալ պաշտօնեաները տեղեկութիւն են ստանում ընտրութիւնների ժամանակ կատարված ապօրինութիւնների մասին, իսկոյն պէտք է հաղորդեն դրա մասին գաւառական ընտրողական մասնաժողովին:

Ներկայումս պալատական պահապանների թւի վրա աւելացնում են էլի 300 հոգի: «Страна»

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Տոլստոյի հրաժարականը, ինչպէս հաղորդում է «Страна» թերթը, լուրերի համաձայն, տեղի է ունենալու մօտ ժամանակներս: Թողնում է իր պաշտօնը նոյնպէս Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու գաղտնի խորհրդական Վալավսկին, որը համաձայն չէ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի հայեացքների հետ:

Վերջին երեք ամիսների ընթացքում արձակվել են ծառայութիւնից մօտաւորապէս 300 հոգի զինուորական գեներալներ և գնդապետներ «Б. В»:

Մարիա Կայսրուհու հովանաւորութեան ներքոյ գտնվող իգական գիմնազիաներում հոգաբարձուների միջնորդութեամբ կարելի է բանալ զանազան մասնագիտական պրօֆէսիօնալ կուրսեր տեղական պայմանների համաձայն, օրինակ՝ մանկավարժական, ձեռագործի, առևտրական և այլն:

Ոստիկանական դեպարտամենտը ուղարկել է նահանգապետներին, քաղաքապետներին, և ժանդարմների վարչութիւններին ներքին գործերի մինիստր Դուրնովոյի հետևեալ շրջաբերականը. «Իմ ստացած տեղեկութիւններից երևում է, որ քաղաքական բնաւորութիւն ունեցող գործերի համար կալանաւորները երկար ժամանակ մնում են առանց հարցաքննութեան, իսկ մի քանի դէպքերում ժանդարմների սպաները, ոստիկանական պաշտօնեաները քննութիւնների ժամանակ ամենևին հարկաւոր չեն համարում ուշադրութեան առնել կալանաւորների բացատրութիւնները, ուստի սրանով առաջարկում եմ իւրաքանչիւր կալանաւորութեան ժամանակ ամեն մի դէպքում անյապաղ վարվել քրէական օրէնսգրքի 398-րդ յօդուածի հիման վրա: Կալանաւորվելուց յետոյ 24 ժամվայ ընթացքում անպատճառ հարցաքննել կալանաւորներին, յայտարարել նրանց թէ ինչ բանի մէջ են մեղադրվում, հնարաւորութիւն տալ նրանց բացատրութիւնները տալու դրա առիթով, մտցնելով նրանց ցուցմունքները արձանագրութեան մէջ, մի և նոյն ժամանակ անյապաղ քննութեան ենթարկել իրական փաստերը, մանաւանդ նամակները, որոնց բովանդակութիւնը երբեմն հարկադրում է շուտափոյթ կարգադրութիւններ անել» «Нов. Вр.»

Ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.» թերթը, Մոսկվայում մահվան պատժի դէմ բողոքին ստորագրողների թիւը հասել է 4141 հոգու:

Թիֆլիսից «Իրշադ» թերթին հաղորդում են, որ 1 և 3-րդ գիմնազիաներում նոյեմբերի անցքերից յետոյ թուրքերէն լեզուի դասերը այլ ևս չեն աւանդվում:

Ինչպէս հաղորդում են, մօտ ժամանակներս Բագւում կայանալու է երգիչ Տ. Շահնազարեանի համերգը:

«Баку» թերթի ասելով, Բագւում, ժամանակաւոր գեներալ-նահանգապետի թոյլտուութեամբ, տ. Մուսայէլեանը մարտի 11-ին Թաղիևի թատրոնում ներկայացում պէտք է տայ յօգուտ ծերացած դերասան Ալաւերդանի: Ներկայացնելու են Մուրացանի «Ռուզան» պիէսան:

Մի խումբ տեղական հրեաներ Պետերբուրգում ուզում էին ուղերձ ներկայացնել բանկիր Մենդելսոնին, բայց այդ բանի դէմ սաստիկ բողոքեցին, «Мал. Г.» ասելով, Պետերբուրգի սիօնիստները, պատճառաբանելով, որ հրէայ կապիտալիստները իրանց ազգակիցներին վնասից բացի ոչ մի բան մինչև այժմ չեն տուել:

Արքունական երկաթուղիների գլխաւոր վարչութեան կառավարիչ գեներալ Շաուֆուս հեռագրով առաջարկել է երկաթուղիների բոլոր կառավարիչներին անմիջապէս աւելացնել ստրէլօչնիկների, սցէպշչիկների, շպալշչիկների, պրովօդնիկների և հեռագրական ստորին պաշտօնեաների ռոճիկները և տալ նրանց բնակարանավարձ: «Веч. Гол.»

Նալտայի և Ալուպկայի քաղաքացիները հեռագրով խնդրամատոյց են եղել Թագաւոր կայսրին լէյտենանտ Շմիդտին ներումն շնորհելու համար:

Սուրմալուի գաւառապետ Բոգուսլավսկու սպանութեան գործը քննվել է Իգդիրում մարտի 3-ին: Բոլոր մեղադրվողներին, որ հինգ հոգի են, դատարանը արդար է ճանաչել: Այդ արդար վճիռը նիստին ներկայ գտնվող հասարակութեան կողմից ընդունվեց ցնծութեամբ: Մեղադրվողներին պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Օսկար և Մատվէյ Օ. Գրուզենբերգ և երդուեալ հաւատարմատարի օգնական Լ. Մուշեղեան:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիա. Պրոֆեսոր Դելբրիւկի կարծիքը: Գերմանացի յայտնի հրապարակախօս պրոֆեսոր Դելբրիւկը մօտ ժամանակներս տպագրել է «Voss. Zeit» թերթում մի շատ նշանաւոր յօդուած, որով ապացուցանում է, որ ֆրանս-գերմանական վէճի պատճառը ամենևին Մարոկկոյի խնդիրը չէ: «Գերմանիան, ասում է նա, ուզում է ասպարէզ դուրս գալ որպէս Իսլամի հովանաւոր: Այդ հովանաւորութեան անունով նա կարող է կատարել Մարոկկոյի խաղաղ նուաճումը և հաստատել իր տնտեսական տիրապետութիւնը, հեռացնելով այնտեղից Ֆրանսիային և միւս պետութիւններին, մինչդեռ քաղաքական իշխանութիւնը կարելի կը լինի վերապահել Շէրիֆին»:

Այդ թէօրիան Դելբրիւկը արտայայտել էր դեռ մի քանի տարիներ առաջ, այժմ նա խոստովանում է, որ Դէլկասսէյի կողմից անգլօ-ֆրանսիական պայմանագրի բովանդակութեան մասին Գերմանիային պաշտօնապէս չը հաղորդելը լուրջ ձևական դանցառութիւն էր: Բայց Գերմանիան հիանալի կերպով կարողացաւ օգուտ քաղել այդ սխալից, արհամարհելով պայմանագիրը: Դելբրիւկը ընդունում է, որ Մարոկկոյի վրա ֆրանսիական գերիշխանութիւն նշանակելը թերևս շահաւէտ կը լինէր Եւրոպայի համար, բայց ներկայումս Շէրիֆը փաստօրէն գտնվում է Գերմանիայի հովանաւորութեան ներքոյ և վերջինս մտադիր է օգուտ քաղել իր այդ դրութեան նպաստաւոր պայմաններից:

«Մի քանի շաբաթից յետոյ, ասում է Դելբրիւկը, մենք կը հասկանանք արդէն, արդեօք իսկապէս արեւմտեան պետութիւնները հաստատ որոշել են առանց մեր օգնութեան վարվել: Այդ դէպքում վճռողը կը լինէ սուրը: «Սակայն, գուցէ, նրանք կը վերջացնեն նրանով, որ կը տան Գերմանիային այն, ինչ որ պատկանում է նրան իրաւունքով և ուրիշ պետութիւնների մէջ ունեցած իր դիրքի համաձայն: Իսկ եթէ նրանք այդ չեն անիլ, գերմանական ազգը կը հասկանայ, որ խնդիրը արդէն Մարոկկոյի մասին չէ, և որ նրան վիճակված է կռիւ մղել իր հայրենիքի ապագայի համար»:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 մարտի

ԹԵՀՐԱՆ, 5 մարտի: Սէյիստանից ստացած լուրերին նայելով, այնտեղ ժանտախտը սկսում է թուլանալ: 20 օրվայ ընթացքում եղել է հիւանդութեան 17 դէպք, որից առողջացել են 3-ը, իսկ 5-ը դեռ մնում են: Սակայն կառավարութեան աններելի անուշադրութեան պատճառով, որ չը չէզոքացնելով հիւանդութեան վայրերը, հիւանդութեամբ բռնված մի գիւղից ժանտախտը անցել է Պուսրօդա-Աբադ, որտեղ հիւանդացել են 10 մարդ: Բժշկական խորհուրդը պատուիրել է ձեռք առնել զգուշութեան ամենախիստ միջոցներ: — Նախկին դեսպան Շպէյերը մեկնեց Թէհրանից:

ՆԻՑՑԱ, 5 մարտի: Մարտի 4-ի գիշերը—լոյս 5-ին վախճանվեց պրինց Կօնստանդին Պէտրովիչ Օլդէնբուրգսկին:

ԼԱՆՍ, 5 մարտի: Կէսօրին 1000 դաշնակիցներ կարմիր դրօշակներով դիմեցին Բիլի և Մանտինի գերեզմանները, ուր հանքերի պայթումի զոհերի գերեզմանների վրա արտասանվեցին մի շարք ճառեր: Ապա ժողովվեցին մի ծածկած շինութեան մէջ, ուր կրկին տաք ճառեր արտասանվեցին: Անկարգութիւններ չեղան: Անցեալ գիշեր տեղ հասաւ մի վաշտ զօրք ժանդարմների ույժը աւելացնելու համար: Ինժինէրների յանձնաժողովի հաղորդագրութեամբ հանքահորերի հրդեհը համարեա չէզոքացրած է: Յոյս կայ շուտով դիակները հանելու:

ՄՈՍԿՎԱ, 5 մարտի: Քաղաքի բանւորները երկար խորհրդակցութիւնից յետոյ քուէարկութեամբ ընտրեցին Դումայի համար 178 թեկնածուների:

ՎԼԱԴԻՎԱՍՏՕԿ, 5 մարտի: Հրդեհ ծագեց ստորջրեայ նաւերի գործարանի բաժիններից մինում, այրվեցին և կրակից փչացան բաւականաչափ մեքենաներ և զանազան նիւթեր, որոնց թւում նաև մի պէրիսկօպ:

ՇԱՎԼԻ, 5 մարտի: Հողատէրերի նախապատրաստական ժողովին 1043 հոգուց ներկայ էին 67-ը: Շինութիւնը առաւօտեանից շրջապատված էր զօրքերով: Մուտքի մօտ կանգնած էին հսկիչը, մի ստրաժնիկ և դրագուններ: Ընտրված են 21 լիազօրներ, որոնցից 13 քահանաներ են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 5-ից: Եկեղեցիների աւագ քահանաների ժողովում ծխականների ներկայացուցիչները որոշում էին թեկնածուներ Պետական Դումայի համար: Այսօր ծխերում թեկնածուների ընտրութեան համար խորհրդակցութիւններ կատարուեցին: Գիւղացիների լիազօրների ընտրութիւնը կատարվեց կանոնաւոր: Ընտրված են չափաւոր տարրեր: Հրէայ ընտրողների ժողովները տեղի ունեն մասնաւոր բնակարաններում: Երէկ ծայրահեղ տարրերը խանգարեցին հրէական ընտրողների ժողովները:

ԲՈՒԴԱՊԵՇՏ. (Կորր. Բիւրօ): Գաւառից եկած պատգամաւորութեանը Ֆէյերվարին յայտնեց, որ կառավարութեան նպատակն է վերականգնել օրէնսդրական նորմալ գործունէութիւնը, բայց նոր ընտրութիւնները կարող են նշանակվել միայն այն ժամանակ, երբ հասարակական տրամադրութեան մէջ փոփոխութիւն տեղի կունենայ: Յայտարարված կառավարչական հաղորդագրութեան մէջ մատնանիշ է արված, որ միացեալ յանձնաժողովի երէկվայ որոշումը մի համարձակ մերժումն է հասարակութեան ծանօթ փաստերի: Յանձնաժողովը հրամանագրեց քաղաքական վարչութիւնների պաշտօնեաներին չը ճանաչել ու չը հնազանդվել նահանգապետներին և կառավարութեան կոմիսարներին: Միևնոյն ժամանակ խոստացվեց հատուցանել գանձարանից այն բոլոր վնասները, որոնք կարող են առաջ գալ այդ անհնազանդութիւնից՝ հէնց որ միութիւնը իւր ձեռքը կ'առնի իշխանութիւնը: Յանձնաժողովը հրամայեց տուրքեր չը վճարել, նորակոչ զինուորներ չը տալ սկզբնական հաւաստագիրներով. զօրքերի շարքերում եղած անձերին հրամայեց չը հպատակվել օրինական հրամաններին, ոչնչացած հրատարակեց առևտրական պայմանագրերը և յայտարարեց օրէնքներ մեկնաբանելու՝ իր հեղինակաւոր իրաւունքը: Դրանով յանձնաժողովը ապօրինի յափշտակեց վարչական, գործադրական և օրէնսդրական իրաւունքները: Այժմ ստանալով այդ բոլորը, յանձնաժողովը սեփական ձեռքով դատապարտեց նրա վտանգաւոր և վնասակար գործունէութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի: Պաշտօնապէս: Մինիստրական ժողովի մարտի 5-ի նիստը նուիրված էր գիւղացիական խնդրին: Գիւղացիական գործի լուծումը կառավարութեան պարտքն է, բայց գիւղացիականի հետ անխզելի կապված է և ուրիշ բարեփոխումների շարքը, այն է տեղական կառավարութեան վերակազմութեան՝ զեմստվային գործը աւելի կանոնաւորելու խնդիրը և կայսերութեան դատաստանական մասի միակերպութիւնը: Ուստի մինիստրական խորհուրդը որոշեց յանուն ընդհանուր օգտի կազմել երկրագործութեան մինիստրութեան կառավարչի և գաւառական վարչութիւնների ներկայացուցիչներից և այնուհետև նորից վերաքննել խնդիրը նախարարների խորհրդում: Բայց և այնպէս խորհուրդը հնարաւոր գտաւ ընդհանուր խնդրից հանել այն որոշումները, որոնք պէտք է հրատարակվեն գիւղական ներկայ օրէնսդրութիւնները 1904 թւի փետրվարի 3-ի հրովարտակի հետ յարմարեցնելու համար: 1907 թւի յունվարի 1-ից հողաբաժինների յետ գնման վճարների վերացումը ոչնչացնում է առանձին գիւղացիների սեփականութեան սահմանափակման իրաւունքը մնացեալ հողերի վրա և նրանց վերաբերութեամբ այս կամ այն ձևի տնօրինութեան իրաւունքը, ինչ չափով որ այդ կարևոր է գանձարանի շահերի տեսակէտից: Պետական Դումայից անկախ անհնարին գտնելով փոփոխելու գիւղական կեանքի ամենակարևոր կողմերը շօշափող հարցերը, մինիստրական խորհուրդը արգելք չը գտաւ, որ այժմեանից անմիջապէս սկսվի մի քանի որոշումների վերաբերեալ խորհրդակցութիւն, որոնք արդէն ընդգծված են հրովարտակով: Այդպիսի որոշումների թւին է պատկանում ընդհանուր նադել հողերից մասնաւոր գիւղացիներին հողաբաժին յատկացնելը, այն հողաբաժինների վաճառման և հաստատելու խնդիրները, որոնք դարձած են մասնաւոր սեփականութիւն կամ ծխաբաժին, գիւղացիներին համայնքից արձակելը և շրջանի (волости) վրա գրելը: Վերջապէս գիւղական հողատիրութեան լաւացման տեսակէտից և ի նկատի ունենալով, որ այդ ուղղութեամբ դրական հետևանքների չէ կարելի հասնել առանց գիւղական բանկի մասնակցութեան, ծրագրվում է ընդարձակել յիշեալ բանկի գործունէութիւնը նաև նադել հողերի վրա: Մինիստրական խորհրդի որոշումն իր վերոյիշեալ մտադրութիւններն անմիջապէս Պետական Խորհրդին առաջարկելու մասին կը ներկայացուի Բարձրագոյն բարեհայեցողութեան:

ՊԼՈՑԿ, 5 մարտի: Կազմվեց հրէական ազգային կուսակցութիւն: Նախընտրական գործունէութեանը անտարբեր են վերաբերւում քրիստոնեայ կուսակցութիւնները:

ՆՈՎԳՈՐՈԴ ՍԵՒԵՐՍԿ, 6 մարտի: Վերջացաւ մանր հողատէրերի ընտրողների համաժողովը. ներկայ էր ընտրողների չորրորդ մասը: Ընտրված են հինգ գիւղացի, չորս ազնուական և մի քաղաքացի (մեշչանին):

Հրատարակված է Ուկազ կառավարիչ Սենատին մարտի 4-ից, որով հրամայվում է կազմել գաւառական — նահանգական մասնաժողովներ և որոշված է, թէ որոնցից պէտք է կազմված լինեն այդ մասնաժողովները: Նրանց պարտականութիւնն է աջակցել գիւղացիական բանկին ձեռք բերելու և կանոնաւորելու գիւղական հողատիրութիւնը և աջակցելու գաղթականական գործի կանոնաւորութեան: Նոյնպիսի մասնաժողով պէտք է կազմվի նաև Պետերբուրգում հողատիրութեան և երկրագործութեան վարչութեան կառավարչի և այլ հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, որոնք թւած են ուկազի մէջ: 1905 թւի մայիսի 6-ին կազմած մասնաժողովը վերացվում է:

ՏԵՄՆԻԿՈՎ, մարտի 6-ին: Համայնքների լիազօրների ընտրութիւններն անցան կատարեալ կարգապահութեամբ: Ընտրված են համայնական վարչութեան քարտուղարը, համայնքների 5 տանուտէրեր, երկու դատաւորներ, միջին կրթութիւն ունեցող գրագիրը և զեմստվային վարչութեան նախկին երկու անդամներ:

ԿԵՐՉ: Ազովի ծովի սառույցը հալվեց, նաւագնացութիւնը բացված է: Նաւերի երթևեկութիւնը կատարվում է անարգել:

ԿԱՇԻՐԱ: Բանւորների լիազօրների ընտրութեան ժամանակ ընտրվեց Ռեզանօ—Ուրալեան գծի մի փականագործ, որ ոչ մի կուսակցութեան չէ պատկանում:

ՕՐԵՕԼ: Մարտի 6-ին: Մալօարխանգելսկի գաւառում գիւղացիների լիազօրների ժողովում ընտրվեցին մի լրագրի թղթակից, մի ուսուցիչ, համայնքի գրագիրը, մի վաճառական և երեք զինուոր գիւղացիք:

ՕՍՏԱՇԿՕՎ, 6 մարտի: Մանր հողատէրերի նախապատրաստական ժողովին 1000 ընտրողներից ներկայ էին 40-ը ընտրված են 9 լիազօրներ: Իսկ գաւառացի հողատէրերի ժողովին 100-ից ներկայ էին 39 հոգի: Ընտրված են 5 մարդ, որից 3-ը բարձր կրթութեան տէր են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի: Ծովային մինիստրութիւնը ներկայումս զբաղված է կոնտինգէնտ կազմելով այնպիսի մարդկանցից, որոնք թէ տեսականապէս և թէ գործնականապէս կարողութիւն ունենն կատարելու իր պայմաններով ծանր և դժուարին ծառայութիւնը ստորջրեայ նաւակների վրա: Այս մտքով մինիստրութիւնը օրէնսդրական կարգով հարց յարուցեց հիմնելու առանձին զօրամաս ստորջրեայ լողալու համար գոյութիւն ունեցող այդպիսիների նման, պատրաստելու սպայական կազմ ուրիշ մասնագիտութիւնների վերաբերմամբ:

ԱՍՏՐԱԽԱՆ, 6 մարտի: Պետական Դումայի ընտրութիւնները նշանակված էր երէկ, բորսային կոմիտէտում, որը սակայն չը կայացաւ, որովհետև կրթական ցենզով վաճառականներ չը կային. այդ առիթով դիմված է հարցմունքով մինիստրութեան:

ՕԴԵՍՍԱ, 6 մարտի: Ժանդարմական վարչութեան կից գտնվող նորաշէն սենեակում, առաւօտեան ժամի 11-ին պայթեց մի դժոխային մեքենայ, որից առաստաղը քանդվեց: Խիստ վնասվեց ժանդարմական գնդապետի կաբինէտը, իսկ կտորներից թեթև վիրաւորվեցին 10 անցուորներ. Ժանդարմական վարչութեան մէջ ոչ ոք չէ վնասվել:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. [illegible]—9½—10 ժ. աչքի. ներքին և նէյարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն:
Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Դ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻԵՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Ե. [illegible] ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համաճարակների ([illegible]) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցը [illegible]
Բժիշկ-պետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սոլոլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 50—100

Բ Ժ Ի Շ Կ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինովսկայա փողոց, № 22, Նաւտրիկովի տանը:
(չ. ու. կ.) 15—15

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կորգանովսկայա փող. № 20 Վերայում, Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 80—150

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը:
Կուկիա Սեմեօնովսկի փողոց № 20:
(ա.օ.) 7—10

Բ Ժ Ի Շ Կ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 105—300

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Րտիշչևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11.
(ա. օ.) 19—20

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մի երիտասարդ, որը անցեալ տարվայ սոսկալի ընդհարումներից զրկված է իր բոլոր կարողութիւնից, խնդրում է տալ իրան մի որ և է պաշտօն՝ այգեպանութեան, հողագործութեան, գինեգործութեան և կամ գրագրութեան, որով հնարաւորութիւն ունենայ թէ կերակրել իր ընտանիքը և թէ դարմանել իր հիւանդ կնոջն ու երեխաներին: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:
2—3

Լոյս տեսան
1) ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ մեծադիր լուսատիպ պատկերը 30 կոպ.:
2) ԱՐԱՄԻ ՊՍԱԿԸ (հայ-թուրքական ընդհարումներից մի պատկեր), 6 կ.:
Գումարով ցանկացողներին 20% զիջումն կը լինի առանց ճանապարհածախսի. կարելի է և վերադիր:
Դիմել՝ Фото-цинкографію С. Согомоняна, Тифлисъ, Базарная, 20. 1—5

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետևեալ գրքերը.
Ի՞նչ է կանանց նպատակը, Շախ-Մուրադեանի 30 կ.:
Ամուսնացած կնոջ ներկայ դրութիւնը, Թարգ. Ցովհաննիսեանի 10 կ.:
Բանւորական հարցը, Զօմբարտի, Թարգմ. Աբեղեանի 40 կ.:
Ժամանակակից ազգայնութիւն, Կաուցկի, Թարգ. Պապովեանի 15 կ.:
Ի՞նչ է ազգութիւնը, Ռընանի, Թարգ. Ղարաքօզեանի 20 կ.:
Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բէլօկօնսկու, Թարգմ. Ջալալեանի 15 կ.:
Արամի պսակը, Շահրիարի. 6 կ.:
Տնտեսական զրոյցներ, Կարիշևի, Թարգմ. Ջալալեանի 40 կ.:
Տնտեսական զարգացման փազերը, Իշխանեանի 15 կ.:
Ընդհանուր ընտրողական իրաւունքը, Թարգմ. Միքայէլեանի 10 կ.:
Ազգայնութիւն և նրա պրինցիպները, Առաքելեանի 30 կ.:
Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը, Բէբէլի, Թարգ. Գ. Շահնազարեանի 10 կ.:
Կօլօնիական քաղաքականութիւնը անցեալում և ներկայում, Կաուցկի, Թարգմ. Խանազադեան 40 կ.:
Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ, Լալայեանի 10 կ.:
Կանանց ներկայ դրութեան մասին, Թարգ. Կասեանի 15 կ.:
Կինը և նրա տնտեսական դրութիւնը, Թարգմ. Եսայեանի 15 կ.:
Կանանց հարցը Նապօնիայում, Թարգմ. Խաչիրեանի 25 կ.:
Տնտեսական և սօցիալ-քաղաքական հարցեր, Զօմբարտի 10 կ.:
Իդէալիզմ և մատերիալիզմ, Խանազադ. 10 կ.:
Կապիտալ և կապիտալիզմ, Թարգմ. Թառայեանի 12 կ.:
Իրաւունքի ծագումը և պատմութիւնը, Թարգ. Թառայեանի 10 կ.:
Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը, Հ. Առաքելեանի 15 կ.:
Այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերվարական խնդիրներով, Թարգ. Թառայեանի 10 կ.:
Գումարով գնողներին զիջում է լինում:
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. Галустяну. 1—2

## Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով):

| | Պօստային | Մարդատար. | Արագ. | Ապրանք. |
|---|---|---|---|---|
| Բագուից դուրս գալը | 4 ժ. 53 ր. ցեր. | 11 ժ. 03 ր. ցեր. | 12 ժ, 20 ր. գիշ. | 4 ժ. 03 ր. գիշ. |
| Թիֆլիս հասնելը | 11 » 10 » » | 5 ժ. 31 ր. առ. | 1 ժ. 30 ր. ցեր. | 9 ժ. 30 ր. գիշ. |
| Թիֆլիսից դուրս գնալը | 11 » 55 » » | 6 ժ. 07 ր. առ. | — | — |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 53 » » | 7 ժ. 05 ր. առ. | — | — |
| Բաթում հասնելը | 1 » 14 ր. գիշ. | 7 ժ. 07 ր. եր. | — | — |
| Բաթումից դուրս գալը | 5 » 15 » » | 5 ժ. 24 ր. ցեր. | — | — |
| Թիֆլիս հասնելը | 6 » 11 ր. եր. | 6 ժ. 44 ր. առ. | — | — |
| Թիֆլիսից դուրս գալը | 6 » 58 » » | 7 ժ. 48 ր. առ. | 5 ժ. 35 ր. ցեր. | 10 ժ. 40 ր. գիշ. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 7 » 56 » » | 8 ժ. 46 ր. առ. | 6 ժ. 33 ր. ցեր. | 11 ժ. 38 ր. գիշ. |
| Բագու հասնելը | 1 » 20 ր. ցեր. | 12 ժ. 42 ր. գիշ. | 6 ժ. 19 ր. առ. | 3 ժ. 55 ր. ցեր. |
| Երևանից դուրս գալը | 12 » 02 » » | — | — | 11 ժ. 26 ր. գիշ. |
| Կարսից » | 3 » 57 » » | — | — | 3 ժ. 12 ր. գիշ. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 7 » 38 » եր. | — | — | 7 ժ. 06 ր. առ. |
| Թիֆլիս հասնելը | 5 » 10 » առ. | — | — | 4 ժ. 48 ր. ցեր. |
| Թիֆլիսից դուրս գալը | 11 » 22 » գիշ. | — | — | 1 ժ. 13 ր. ցեր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 20 » » | — | — | 2 ժ. 11 ր. ցեր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 10 » 15 » առ. | — | — | 12 ժ. 50 ր. գիշ. |
| Կարս հասնելը | 1 » 55 » ցեր. | — | — | 4 ժ. 24 ր. գիշ. |
| Երևան հասնելը | 4 » 21 » » | — | — | 6 ժ. 48 ր. առ. |

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
„ԿԵԱՆՔ“
Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի, որ քաղաքական պայմանների շնորհիւ առ այժմ կը հրատարակվի իբրև
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆլիսում 20 կոպ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7 կ.:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Кянкъ», Чавчавадзская ул. № 4. արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiank», Tschawtchawadskaia № 4
3—3 (ու.կ.չ.) Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15